

2019

ՀԱՆԳՍՏԻ ԳՈՏԻ

ՀՀ Գեղարքունիքի մարզ Շողակաթ համայնք Դրախտիկ գյուղի
ափամերձ տարածք, 1-ին փողոց 63, 63/1 հողամաս (լրամշակված)

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՑ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
«ՓՈՔԻ ԿՂԶԻ» ՍՊԸ

ԿԱՏԱՐՈՂ
Ա/Ձ Ա. ԳԱԼՈՅԱՆ

Ա/Ձ Ա. Գալոյան
ք. Երևան Սևանի 5
Հեռ. բջջ. +374 99 994222
galoyan.aram@gmail.com

ՀՀ



ՀԱՆԳՍՏԻ ԳՈՏԻ

ՀՀ Գեղարքունիքի մարզ, Շողակաթ համայնք, Դրախտիկ գյուղի 1-ին փողոց 63, 63/1
հողամաս

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՑ (լրամշակված)



«ՓՈՔՐ ԿԳԻՏ» ՍՊԸ տնօրեն՝

(ստորագրություն, կնիք)

Մ. Պետրոսյան

Ա/Ձ Ա. Գալոյան

Երևան 2019

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	4
1.1	Ձեռնարկողի մասին տեղեկություն	4
1.2	Հապավումներ	4
1.3	Նախատեսվող գործունեության նպատակը եվ հիմնավորումը	5
1.4	Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)	7
1.4.1	<i>Նախատեսվող գործունեության բնութագիրը</i>	Error! Bookmark not defined.
1.4.2	<i>Շինարարության օրացուցային պլանը և կադրային ապահովումը</i>	16
1.4.3	<i>Նյութերի և բնառեսուրսների օգտագործում</i>	17
1.5	<i>Շահագործման փուլ</i>	19
1.5.1	<i>Ջրօգտագործում է ջրահեռացում</i>	Error! Bookmark not defined.
1.5.2	<i>Մաքրման կայան</i>	19
2.	ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՆ	21
2.1	Նախատեսվող գործունեության տարածքի ֆիզիկա-աշխարհագրական	21
	նկարագիրը և լանդշաֆտը	21
2.2	Հատուկ պահպանվող տարածքներ	22
2.3	Տարածաշրջանի երկրաբանությունը և հիդրոերկրաբանությունը	23
2.4	Մեյսմատեկտոնիկ պայմաններ	Error! Bookmark not defined.
2.5	Կլիման և օդերևութաբանական պայմանները	24
2.5.1	Ջերմաստիճանը	24
2.5.2	Խոնավությունը	24
2.5.3	Մթնոլորտային տեղումները	25
2.6	Կենսաբազմազանություն	Error! Bookmark not defined.
2.6.1	Բուսական աշխարհ	Error! Bookmark not defined.
2.6.2	Կենդանական աշխարհ	Error! Bookmark not defined.
2.7	Նախատեսվող գործունեության տարածաշրջանի սոցիալ-տնտեսական վիճակը	25
	մոտակա գյուղական համայնքների նկարագրերը	33
2.8	Պատմամշակութային հուշարձաններ	36
3.	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ	37
3.1	Ռիսկերի գնահատում	37
3.2	Արտանետումների աղբյուրները	38
3.3	Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն	38
3.3.1	<i>Մթնոլորտային օդ</i>	38
3.3.2	<i>Ջրային ռեսուրսներ</i>	38
3.3.3	<i>Հողային ռեսուրսներ</i>	38
3.3.4	<i>Թափոնների կառավարում</i>	39
3.3.5	<i>Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը</i>	39
3.3.6	<i>Աղմուկ</i>	40
	ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ	43
	ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ	47
	ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	25

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1 Ձեռնարկողի մասին տեղեկություն

- 1.2 Ձեռնարկող՝ «ՓՈՔՐ ԿՂԶԻ» ՍՊԸ
- 1.3 Ձեռնարկողի իրավաբանական հասցեն՝ ՀՀ ք. Սևան, Խաղաղության 4, բն. 30
- 1.4 Ձեռնարկողի փաստացի հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, գ. Դրախտիկա
- 1.5 Նախատեսվող գործունեության վարչական տարածքը՝ Գեղարքունիքի մարզ, Շողակաթ համայնք, գ. Դրախտիկա
- 1.6 Հեռախոս՝
- 1.7 Աշխատանքային նախագծի մշակող՝ «Քյուպրոջեքտ» ՍՊԸ

1.2 Հապավումներ

- ՀՀ՝ Հայաստանի Հանրապետություն
- ՓԲԸ՝ Փակ Բաժնետիրական Ընկերություն
- ՍՊԸ՝ Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
- ՊՈԱԿ՝ պետական ոչ առևտրային կազմակերպություն

1.3 Նախատեսվող գործունեության նպատակը եվ հիմնավորումը

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը: Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

Գեղարքունիքի մարզի Շողակաթ համայնքի Դրախտիկ գյուղի 1-ին փողոց, 63, 63/1 հողամաս հասցեում նախատեսվում է կազմակերպել անհատական հանգստի գոտի:

Հանգստի գոտու աշխատանքային նախագիծը իրականացվել է գործող նորմատիվ փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

Նախատեսվող գործունեության նպատակն է կազմակերպել ժամակակից բազմաֆունկցիոնալ հանգստի գոտի:

2014թ.-ի հունիսի 21-ի "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:

Հանգստի գոտու աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը մշակված է "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի համաձայն:

Բնապահպանական ազդեցության գնահատման այս զեկույցը նկարագրում է նախատեսվող գործողությունները, բնապահպանական ելակետային պայմանները, հնարավոր ազդեցությունները, բնապահպանական ազդեցության գնահատման շրջանակը: Բնապահպանական ազդեցության գնահատումը պատրաստվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

Սկսած 1991թ. շրջակա միջավայրի պահպանությանն առնչվող ավելի քան 25 օրենսգրքեր և օրենքներ, բազմաթիվ ենթաօրենսդրական ակտեր և կանոնակարգեր են ընդունվել:

Շրջակա միջավայրի պահպանության հարցերին առնչվող ՀՀ օրենքների ցանկը ներկայացված է ստորև.

- Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին (1992),
- Մթնոլորտային օդի պահպանության մասին (1994),
- Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին (2014),

- Պատմական և մշակութային անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին (1998),
- Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին (2006),
- Բուսական աշխարհի մասին (1999),
- Կենդանական աշխարհի մասին (2000),
- ՀՀ հողային օրենսգիրք (2001),
- ՀՀ հարկային օրենսգիրք (ՀՕ-165-Ն, 01.01.2018թ.)
- «ՀՀ բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 14.08.2008 N 967-Ն որոշում
- Բնապահպանական կրթության մասին (2001),
- ՀՀ ջրային օրենսգիրք (2002),
- ՀՀ ընդերքի մասին օրենսգիրք (2011),
- Թափոնների մասին (2004),
- Բնապահպանական մոնիտորինգի մասին (2005),
- Բնապահպանական վերահսկողության մասին» (2005),
- Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին (2006),
- ՀՀ անտառային օրենսգիրք (2005),
- ՀՀ Կառավարության «ՀՀ կենդանիների Կարմիր գրքը հաստատելու մասին» 29.01.2010թ. N 71-Ն որոշում,
- ՀՀ Կառավարության «ՀՀ բույսերի Կարմիր գրքը հաստատելու մասին» 29.01.2010թ. N 72-Ն որոշում,
- «Սևան» ազգային պարկի 2007-2011 թվականների կառավարման պլանի (հողերի օգտագործման սխեմայի) հաստատման մասին» ՀՀ Կառավարության 18.01.2007թ. N 205-Ն որոշում
- «Սևան» ազգային պարկ պետական հիմնարկը վերակազմակերպելու, «Սևան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպիչության կանոնադրությունները հաստատելու մասին» ՀՀ Կառավարության 30.05.2002թ. N 927-Ն որոշում
- «Սևանա լճի ափամերձ տարածքներում քաղաքաշինական գործունեության կանոնակարգման միջոցառումների մասին» 14.09.2006թ. N1386-Ն որոշում
- «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» ՀՀ Կառավարության 31.07.2014թ. N 781-Ն որոշում
- Հրաման N2-III-11.3 «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» սանիտարական նորմերը հաստատելու մասին: Ուժի մեջ է մտել 13.04.2002թ:
 - Հաշվի են առնվել նաև՝
 - ՀՀ կառավարության 2014թ. սեպտեմբերի 25 որոշումը «ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության եվ

օգտագործման բնագավառում պետական ծրագիրը եվ միջոցառումները հաստատելու մասին»

- ՀՀ կառավարության 2015 թ. դեկտեմբերի 10-ի նիստի «ՀՀ կենսաբանական բազմազանության պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման բնագավառներում ռազմավարությանը և գործողությունների ազգային ծրագրին հավանություն տալու մասին» N54 որոշում
- ՀՀ կառավարության 2015թ. մայիսի 27-ի նիստի «ՀՀ անապատացման դեմ պայքարի ռազմավարությունը և գործողությունների ազգային ծրագրին հավանություն տալու մասին» N23 արձանագրային որոշումը:

1.4 Նախատեսվող գործունեության բնութագիրը

Գեղարքունիքի մարզի Դրախտիկա գյուղի 1-ին փողոց 63, 63/1 հողամաս հասցեում նախատեսվող անհատական հանգստի գոտու նախագծային աշխատանքներին հիմք են հանդիսացել Շողակաթ համայնքի ղեկավարի կողմից տրված 2019 թվականի մարտի 14-ի թիվ 3 նախագծային թույլտվությունը /ճարտարապետահատակագծային առաջադրանքը/, «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի և «Փոքր կղզի» ՍՊԸ միջև 2004 թվականի նոյեմբերի 19-ի կնքված Դրախտիկ գյուղի ավիամերձ հատվածում 3.5 հա հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման N 278 պայմանագիրը (պայմանագիրը կցված):

Կառուցապատումը նախատեսվում է իրականացնել ՀՀ Կառավարության 2008թ. դեկտեմբերի 18-ի թիվ 1563-Ն որոշման տեխնիկական բնութագրերի Սևանա լճի կենտրոնական գոտում կառուցապատման համար նախատեսված տարածքների գոտևորման նախագծի պահանջներին համապատասխան: 1908.0 մ բացարձակ նիշից ցածր տարածքում հիմնական շինություններ չի նախատեսվում: Նախատեսվող շինարարական աշխատանքները իրականացվելու են ծառերից ազատ տարածքներում (ծառահատում չի իրականացվելու):

Նախատեսվող գործունեության ենթակա տարաշքի բարձրությունը ծովի մակարդակից կազմում է 1800-2000մ:

Կառուցապատման ենթակա տարածքը չկառուցապատված է, միջին թեքություններով, մասամբ անտառածածկ:

Տարածքի մուտքը՝ Սևան – Ծովագյուղ – Վարդենիս Մ-14 ավտոմայրուղուց գոյություն ունեցող երկրորդական ճանապարհով:

Հողամասի նպատակային նշանակությունը՝ հատուկ պահպանվող տարածք:

Հողատարածքին կից տեղակայված են «Սևան» ազգային պարկ» հատուկ պահպանող հողատարածքները:

ՀԱՆԳՍՏԻ ԳՈՏՈՒ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՆՈՐՈՇԻՉՆԵՐ

ՔՈԹՈՋՆԵՐԻ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԸՆԴ. ՄԱԿԵՐԵՍ ՀԱՇՎԱՐԿՎԱԾ ԱՐՏ. ՊԱՏԵՐՈՎ	14981.4 ՔՃ	–
ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԸՆԴ. ՄԱԿԵՐԵՍ ՀԱՇՎԱՐԿՎԱԾ ԱՐՏ. ՊԱՏԵՐՈՎ	264.6 ՔՃ	–
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆԱԿԵԼԻ ՄԱԿԵՐԵՍ	9578.7 ՔՃ	–
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՐՆԵՐԻ ՔԱՆԱԿ	140 ՀԱՄԱՐ	–
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՆԳՍՏԱՑՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿ	560 ԱՆԶ	–
ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՄԱԿԵՐԵՍ	265 ՔՃ	0.75%
ՔՈԹԵՋՆԵՐԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՄԱԿԵՐԵՍ	6150 ՔՃ	17.53%
ՄՊԱՍԱՐԿՈՂ ՃԱՆԱՊՈՐՀՆԵՐ ԵՎ ՍԱԼՎԱԾՔՆԵՐ	2360 ՔՃ	6.72%
ԳԵՈՑԱՆՑԱՅՈՒՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐ ԵՎ ՍԱԼՎԱԾՔՆԵՐ	2150 ՔՃ	6.1%
ԿԱՆԱԶԱՊԱՏՄԱՆ ՄԱԿԵՐԵՍ	24175 ՔՃ	68.9%
ՀՈՂԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍ	3.51 Հա	100%

ՇԻՆՈՒԹՅԱՆ ԱՆՎ.	ՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԸՍՏ	ՄԻՎՈՐ ՔԱՆԱԿ	ՔԱՆԱԿ	ԸՆԴՀԱՆՈՒՐ
ՏԻՊԱՅԻՆ ՔՈԹԵՋ N1	ՇԻՆՈՒԹՅԱՆ ԸՆԴ. ՄԱԿԵՐԵՍ ՀԱՇՎ. ԱՐՏԱՔԻՆ ՊԱՏԵՐՈՎ	1472.0 ՔՃ	8	11776.0 ՔՃ
	ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՄԱԿԵՐԵՍ	368.0 ՔՃ		2944.0 ՔՃ
	ԲՆԱԿԵԼԻ ՄԱԿԵՐԵՍ	846 ՔՃ		6768.0 ՔՃ
	ՀԱՄԱՐՆԵՐԻ ՔԱՆԱԿ	12 ՀԱՄԱՐ		96 ՀԱՄԱՐ
	ՀԱՆԳՍՏԱՑՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿ	48 ԱՆԶ		384 ԱՆԶ
ՏԻՊԱՅԻՆ ՔՈԹԵՋ N2	ՇԻՆՈՒԹՅԱՆ ԸՆԴ. ՄԱԿԵՐԵՍ ՀԱՇՎ. ԱՐՏԱՔԻՆ ՊԱՏԵՐՈՎ	145.7 ՔՃ	22	3205.4 ՔՃ
	ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՄԱԿԵՐԵՍ	145.7 ՔՃ		3205.4 ՔՃ
	ԲՆԱԿԵԼԻ ՄԱԿԵՐԵՍ	127.76 ՔՃ		2810.7 ՔՃ
	ՀԱՄԱՐՆԵՐԻ ՔԱՆԱԿ	2 ՀԱՄԱՐ		44 ՀԱՄԱՐ
	ՀԱՆԳՍՏԱՑՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿ	8 ԱՆԶ		176 ԱՆԶ
ՕԺԱՆԴԱԿ ԿԱՌՈՒՅՑ	ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՄԱԿԵՐԵՍ	264.6 ՔՃ	1	264.6 ՔՃ

ՀՈՂԱՀԱՏԿԱՑՄԱՆ ՄԱԿԵՐԵՍ - 35 100 ք.մ. 100%
 ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՄԱԿԵՐԵՍ - 8775 ք.մ. 25%
 ԿԱՆԱԶԱՊԱՏՄԱՆ ՄԱԿԵՐԵՍ - 24175 ք.մ. 68.9%
 ԳԵՈՑԱՆՑԱՅՈՒՆ ԿԱՆԱԶԱՊԱՏՈՒՄ- 2150 ք.մ. 6.1%

ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ "ԲՈՒՆԻ" ԾԱՌԵՐ 50 ՀԱՏ

ՏԵՂԱԴԻՐՔԸ ՊԱՀՊԱՆՈՂ ԾԱՌԵՐ 30 ՀԱՏ

ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԾԱՌԵՐ 20 ՀԱՏ

ՆՈՐ ՏՆԿՎՈՂ ՓՇԱՏԵՐԵՎ ԾԱՌԵՐ 43 ՀԱՏ

Հանգստի գոտու լողափը կկահավորվի համաձայն ՀՀ Կառավարության 2008թ. դեկտեմբերի 18-ի թիվ 1563-Ն որոշման տեխնիկական բնութագրերի, մասնավորապես՝

1. Լողափի գոտու տարածքում պահանջվող կահավորման և սարքավորումների տարրեր

1) հանդերձարան-խցիկներ (560 հանգստացողների 20 տոկոսի հաշվարկով՝ 40 մարդու համար՝ 2 խցիկ 1,2-1,3 քառ. մետր մակերեսով).

2) տենտեր, հովանոցներ (300 քառ. մետր).

3) լողափի գոտու մանկական հատվածը կարող է կահավորվել տոբոգանով (h = 2,5-3,0 մետր՝ մեկ ելքով դեպի լիճ), շվաքարաններով, ավազամաններով, մանկական ջրավազաններով, ճոճանակներով, ընդ որում, մանկական հատվածի լողալու գոտու հատակը պետք է ունենա փոքր թեքություն՝ ոչ ավելի, քան 70 սանտիմետր խորությամբ.

4) աղբանոթներ՝ 50 մարդու համար՝ 1 աղբանոթ հաշվարկով՝ ընդամենը 11 աղբանոթ

2. Բուֆերային գոտու տարածքի կահավորման և սարքավորումների տարրեր

1) դրամարկղային տաղավարները՝ 1 հատ

2) ցնցուղարանները՝ 10 ցնցուղ, խմելու ջրի ծորակ՝ 2 ծորակ:

Ցնցուղարանների ջուրը տաքացնել արևի ճառագայթների ջերմությամբ.

3) գուգարանները, լողափի գոտուց առնվազն 50 մետր հեռավորության վրա՝ 8 գուգարանակոնք և 8 միզաման

4) մերձատար հարմար ուղիներին հարթակների վրա տեղադրված աղբի կոնտեյներներ, կողպվող կափարիչով

Տարածքում առկա է բազմամյա խոտի տեսքով տեղ-տեղ խառը աճած բուսականություն: Հողաբուսաշերտի հզորությունը կազմում է 15-20սմ: Հողային աշխատանքների ընթացքում այդ տարածքի բուսահողը 2400մ³ ծավալով շինարարի կողմից նախատեսվում է պահել հատուկ վայրում և պաշտպանելու համար ծածկել համապատասխան ծածկով, որպեսզի չխառնվի շինարարական աղբի հետ: Շինարարական աշխատանքների ավարտից հետո պահեստավորված բուսահողը կօգտագործվի կանաչապատման աշխատանքներում: Կանաչապատման աշխատանքները և նախատեսվող ծառափայլին բուսականության տեսակները կհամաձայնեցվեն «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի հետ և կիրականացվեն առաջնորդվելով <<Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին>> ՀՀ օրենքի դրույթներով:

Շինարարության ընդհանուր տևողությունը կկազմի 2 տարի:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո հանգստի գոտու տարածքը նախատեսվում է կանաչապատել և բարեկարգել, տարածքի կանաչապատման մակերեսը կազմում է 24175 մ²:

Հանգստի գոտու տարածքում տրանսպորտի կայանատեղին նախատեսված է մուտքային մասում, դեպի լիճ ուղղությամբ առկա է կանաչ գոտի և տնակներ, ինչը սահմանափակում է վիզուալ տեսադաշտը լողափից:

Հանգստի գոտու գազամատակարարում չի նախատեսվում, ջեռուցումը և տաք ջրամատակարարումը կիրականացվի հոսանքով:

Տարածքի էլեկտրամատակարարման համար ընկերությունը կդիմի «ՀԷՑ» ՓԲԸ-ին տեխնիկական պայման ստանալու համար:

1.5 Ճարտարապետաշինարարական մաս

- Շինությանը ֆունկցոնալ առումով բազմաֆունկցիոնալ հասարակական սպասարկման շինություն է:
- Սենյակների և սենքերի կազմը նախատեսված է տեխնիկական առաջադրանքին համապատասխան:
- Արտաքին պատերը նախատեսված են կանոնավոր ձևի տուֆ քարերով երեսպատված կոպտատաշ ֆելզիտ քարով /գյուղական շարվածք/, եզրային հատվածներում՝ սրրատաշ դարչնագույն «ԱՆԻ» տուֆ քարով, խարիսխային և հենապատերի հատվածքներում բազալտե խամքարե շարվածք, ներքին պատերն ու միջնորմերը՝ թեթևաբլոկ բետոնե:
- Տանիքը նախատեսված է ցինկապատ փոշեներկված մետաղաթիթեղյա կղմիդրանման «Բանգա» տիպի:
- Պատերի ներքին հարդարումը նախատեսված է իրականացնել միջանցքներում և սենյակներում՝ բարձորակ գաջե սվաղ ներկապատված լատեքսային ներկով, նախասրահում և դահլիճում՝ գաջե սվաղ ներկապատված դեկորատիվ ներկով, նկուղային հարկի սենյակներում՝ ցեմենտավազե սվաղ ներկապատված լատեքսային ներկով, սանհանգույցներում՝ ցեմենտավազե սվաղ երեսապատված հաղձասալերով:
- Հատակները նախատեսված են՝ մամլագրանիտից միջանցքների և աստիճանավանդակների հատվածներում, հյուրասենյակներում՝ կավրոլին, սանհանգույցներում՝ կերամիկան իտեցեսալ, պատշգամբում՝ բազալտե հղկված սալերով:
- Նախասրահի հատակները, աստիճանները և սանդղահարթակները կարող է երեսպատվել բնական հատակի համար նախատեսված այլ քարերով:
- Առաստաղների հարդարումը նախատեսված է իրականացնել սենյակներում՝ թարձորակ գաջե սվաղ ներկապատված լատեքսային ներկով, նախասրահում և միջանցքներում՝ կախովի տիպի, առևտրի կետում և դահլիճում՝ կախովի, ձայնակլանման միջոցառումներով ակուստիկային հաշվարկով ներկայացված առաջարկություններին համապատասխան:
- Արտաքին դռները նախատեսված են այլումինե, ապակեպատ ապակեփաթեթներով, ջերմամեկուսացված, հյուրանոցային և աշխատանքային սենյակներում՝ ՄԴՖ-ից, սանհանգույցներում՝ մետաղապլաստե՝ փայտի ֆատկուրայով, դահլիճի շգամուտքի հատվածներում՝ փայտյա, աստիճանավանդակների հատվածում՝ այլումինե, ապակեպատ, հրակայուն:
- Պատուհանները նախատեսված են մետաղապլաստե, քառախցիկ, արտերկրյա արտադրության պրոֆիներով, երկշերտ ապակեփաթեթներով, վիտրաժները՝ այլումինե, ջերմամեկուսացված, երկշերտ ապակե փաթեթներով, արտաքին

պատուհանագրգերը՝ բազալտե 40 մմ հաստության սալերով, ներքին
լուսամուտագրգերը՝ պլաստմասայից:

1.6 Նախատեսվող գործունեության տարածքի տեղադիրք





ԳԼԱՀԱՏՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻՑ Մ 1:1000	ԹԵՐԹ
	2



Հողաստի ՀԱՏԱԿԱԳԻԾ

«Փոքր Կղզի» ՍՊԸ

ին Հողհատկացման հիմքը 19.11.2004թ. ԿՐԾ. ԹԻԿ 229 ԿՐԶԱՀԿԳԻ.

Գեղատրուինք


Դրատուն

Փողոց 1 թիվ 63

Սարգ

Համայնք

Հասցե



Բաժանվող հատված

Հողաստի					ՇՆՈՒԹՅԱՆ			
Սակերեսը (հա)	2.4000	Կետի հ/հ	Y	X	Հեռավորությունը (մետր)	Սահմանակից սեփականատիրոջ (օգտագործողի) անուն, ազգանունը (անվանումը)	Համայնքի անվանումը	Գործառնական նշանակությունը (անվանումը)
Ծածկագիրը		1	8516892.44	4490989.42	112.24	Սահմանակից սեփականատիրոջ (օգտագործողի) անուն, ազգանունը (անվանումը)	Համայնքի անվանումը	Գործառնական նշանակությունը (անվանումը)
		2	8516961.778	4491077.677	28.48			
		3	8516986.384	4491063.344	47.41			
		4	8517026.631	4491038.283	73.71			
Նպատակային նշանակությունը	Հատուկ պահպանվող	5	8517087.199	4490996.279	45.01			
		6	8517123.942	4490970.284	81.9			
Գործառնական նշանակությունը	Հանգստի համար	7	8517072.821	4490906.294	47.64			
		8	8517043.084	4490869.072	10.57			
		9	8517034.671	4490875.476	79.32			
		10	8516971.619	4490923.608	16.59			
Հողամասը ծանրաբեռնված է		11	8516958.42	4490933.659	25.78			
		12	8516937.986	4490949.374	30.78			
		13	8516914.205	4490968.922	23.63			
		14	8516897.621	4490984.9	6.86			
		1	8516892.44	4490989.42	6.86			

Կատարող  (պիրագրություն)

Էղիկ Վիրաբյան
Անուն, ազգանուն

Որակավորման վկայականի համար 0220

տրման ամիս, ամսաթիվը

Իրավաճանկան անձի 85110755094 (պետական գրանցման համարը)

«Արտեդ» ՍՊԸ (անվանումը)



Կ.Տ

ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

«Փոքր Կողի» ՍՊԸ

ին Հողիատկացման հիմքը 19.11.2004թ. ԱՐԾ. ԹԿ 229 ԱՐԵԱԶԿԿՐԱԿ

Գեոտորունիք


Դրահատիկ

ՓՈՂՈՅ 1 ԹԿ 63/1

Մարզ

Համայնք

Դասը



ՀՈՂԱՄԱՍԻ				ՇԻՆՈՒԹՅԱՆ				
Սակերեքը (հա)	1.100	Կետի հ/հ	Y	X	Հեռավորությունը (մետր)	Սահմանակից սեփականատիրոջ (օգտագործողի) անուն, ազգանունը (անվանումը)	Համարը, ըստ հողամասի հատակագծի	Գործառնական նշանակությունը (անվանումը)
Ծածկագիրը		1	8516804.746	4491061.916	89.78	«ԱՐՏԵԴ» «ԱՐՏԵԴ» «ԱՐՏԵԴ»		
		2	8516866.108	4491127.454	33.19			
		3	8516895.856	4491112.734	21.13			
Նպատակային նշանակությունը	Հատուկ պահպանվող	4	8516914.834	4491103.449	24.75			
		5	8516936.703	4491091.858	28.81			
Գործառնական նշանակությունը	Հանգստի համար	6	8516961.778	4491077.677	112.24			
		7	8516892.44	4490989.42	18.43			
		8	8516878.553	4491001.534	22.2			
Հողամասը ձևերաբեռնված է		9	8516861.768	4491016.068	19.51			
		10	8516847.01	4491028.827	31.44			
		11	8516823.087	4491049.232	12.56			
		12	8516812.743	4491056.355	9.74			
		13	8516804.746	4491061.916				

Կատարող [Signature] եղիկ Վիրաբյան
 (ստորագրություն) Անուն, ազգանուն
 Որակավորման վկայականի համարը 0220 տրման ամիս, ամսաթիվը
 Իրավաճանկան անձի 85110755094 «Արտեդ» ՍՊԸ
 (սխտական գրանցման համարը) (անվանումը)



1.7 Ջրամատակարարում, կոյուղի

ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ

Հանգստի գոտու կոմունալ-կենցաղային նպատակով ջրամատակարարումը կիրականացվի ավտոնոմիստերնով, պայմանագրային հիմունքներով: Այդ պատակով տարածքում նախատեսվում է տեղադրել ջրի ըեզերվուար, որը կմիացվի ներքին ցանցին:

Ներքին ցանցերը մոնտաժվում են պոլիպրոպիլենե խողովակներից $\Phi 50;40;32;25;20$ մմ

Արտաքին ցանցը մոնտաժվում է $\Phi 50$ մմ պոլիէթիլենային խողովակներից.

ԿՈՅՈՒՂԻ

Կենցաղային հոսքերը սանիտարատեխնիկական սարքավորումներից ինքնահոս խողովակներով հեռացվում են նախագծվող արտաքին ցանցի մեջ և արտաքին ցանցի միջոցով ուղղվում են դեպի մաքրման կայան: Ներքին և արտաքին ցանցերը անցկացվում են պոլիվինիլքլորիդային կոյուղու խողովակներից $\Phi 200;160;110;50$ մմ:

1.7.1 Շինարարության օրացուցային պլանը և կադրային ապահովումը. Հողային աշխատանքներ

Հանգստի գոտու շինարարական աշխատանքները նախատեսվում է իրականացնել 2 տարվա ընթացքում, այդ թվում`

- Տարածքի նախապատրաստում և հողային աշխատանքներ` 1 ամիս
- Հողային աշխատանքներ` 2 ամիս
- Հիմնային աշխատանքներ` 3 ամիս
- Պատեր` 3 ամիս
- Ե/բ ծածկեր և ե/բ կոնստրուկցիաներ` 3 ամիս
- Պատեր` 3 ամիս
- Ե/բ ծածկեր և ե/բ կոնստրուկցիաներ` 3 ամիս
- Տանիքային աշխատանքներ` 1 ամիս
- Միջնորմեր` 1 ամիս
- Հարդարման աշխատանքներ` 2 ամիս
- Բարեկարգման աշխատանքներ` 2 ամիս

Շինարարության ժամանակ օգտագործվող հիմնական շինարարական տեխնիկայի, փոխադրամիջոցների ցանկը`

- Ավտոմոբիլային կռունկ KC-65713-1 «Галичанин»
- կամ տվյալ տեսակին համարժեք տեխնիկական տվյալներով
- Բետոնամղիչ պոմպ
- Կախովի հարթակներ
- Բեռնատար ինքնաթափ MA3 5550 կամ համարժեք
- KAMA3 5511 և այլն
- Էքսկավատոր Hyundai 170W-7 /հիդրմուրճով /

- Շարժական կոմպրեսոր - ըստ պահանջի
- Էլ.էռակցման սարք - ըստ պահանջի
- Ձեռքի էլեկտրական գործիքներ
- Ձեռքի մեխանիկական գործիքներ
- Ատաղձագործական գործիքներ
- Ներկարարական գործիքներ

Շինարարությունում աշխատողների ընդհանուր թիվը՝ 15 մարդ, որից

- Ինժեներատեխնիկական անձնակազմ - 3 մարդ
- Արհեստագործներ և բանվորներ - 8 մարդ
- Մեքենավարներ և օգնականներ - 4 մարդ

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումը իրականացվելու է շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում:

Հողային աշխատանքներ՝

- Հանույթ՝ 4300 մ³
- Հետլիցք՝ 1300մ³

Ավելացած 3000 մ³ հողային զանգվածը կօգտագործվի տարածքի անհարթությունները հարթելու նպատակով:

1.7.2 Նյութերի և բնառեսուրսների օգտագործում

Շինարարության ժամանակ օգտագործվելու են շինանյութեր, որոնց ցանկը և քանակները ներկայացված են աշխատանքային նախագծի համապատասխան բաժնում: Բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման համար՝ և շինանձնակազմի խմելու կենցաղային նպատակների համար:

ա)Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$W_{\text{է.ի.}} = (n \times N + m_1 \times N_1) \times T, \text{ որտեղ}$$

n – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 3 մարդ

N – ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ³օր/մարդ

m_1 – սպասարկող աշխատողների թվաքանակն է՝ 12 մարդ

N_1 – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է՝ 0.025 մ³օր/մարդ

T – աշխատանքային օրերի թիվն է՝ 1080 օր

$$W_{\text{խ.տ.}} = (3 \times 0.016 + 12 \times 0.025) \times 1080 = 375.84 \text{ մ}^3/\text{շին. ժամ. կամ } 0.348 \text{ մ}^3/\text{օր:}$$

բ) Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝

$$U_1 = S_1 \times K_1 \times T, \text{ որտեղ՝}$$

S_1 – ջրվող տարածքի մակերեսը, 500 մ²,

K_1 – 1 մ² օրական ջրցանի նորմը, 0.0015 մ³,

T – ջրցանի ժամանակահատվածը օրերով, 180

$$U_1 = 500 \times 0.0015 \times 180 = 135 \text{ մ}^3/\text{շին. ժամ. կամ } 0.75 \text{ մ}^3/\text{օր}$$

Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 510.084 մ³/շին. ժամ:

Շինարարական աշխատանքների ընթացքում ջրցան իրականացնելու նպատակով օգտագործվող ջուրը կմատակարարվի համապատասխան մեքենաներով պայմանագրային հիմունքներով:

ԻՏՍՍ և բանվորական անձնակազմը կոմիտունալ-կենցաղային կարիքները կհոգան շինհրապարակում ժամանակավոր նախատեսվող բիոսանհանգույցներից :

1.7.3 Շրջակա միջավայրի վրա կանխատեսվող ազդեցությունը

Շրջակա միջավայրի վրա նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցությունը բացահայտելու, վերլուծելու և գնահատելու նպատակով անհրաժեշտ է նույնականացնել ոլոր այն գործընթացները, սարքավորումները, օգտագործվող նյութերն ու ռեսուրսները, որոնք յուրաքանչյուրն առանձին կամ որաշակի գուգակցմամբ կարող են առաջացնել օդային և ջրային ավազաններ վնասակար նյութերի արտանետումներ և արտահոսքեր, վտանգավոր թափոններ, ինչպես նաև ազդել տարածաշրջանի կենսաբազմազանության վրա:

Մթնոլորտային արտանետումներ տեղի են ունենալու առաջարկվող աշխատանքային նախագծի իրականացման կառուցման փուլերում: Տվյալ արտանետումները ներառում են օդի որակը աղտոտող նյութեր, մասնավորապես խոսքը գնում է փոշու, շինարարական տեխնիկայի դիզ. վառելիքի այրման արդյունքում առաջացող արտանետումների մասին:

Փոշու արտանետումները կառաջանան շինարարության հիմնական աշխատանքների ժամանակ, ինչը կարող է բացասական ազդեցություն ունենալ մթնոլորտային օդի որակի վրա: Հողային աշխատանքների արդյունքում գոյացող փոշին կարող է ազդել մթնոլորտային օդի որակի վրա, մասնավորապես, շինարարության սկզբնական փուլերում: Որոշ փոշի կարող է առաջանալ քամիների ժամանակ պահեստավորված շինանյութի տեղաշարժմամբ և շինարարական հրապարակի մոտակայքում մեքենաների շարժի ժամանակ: Հարկ է նշել, որ այս ազդեցությունները տեղի կունենան շինարարական աշխատանքների ժամանակ, սակայն կլինեն կարճաժամկետ ուստի, փոշեգոյացման ազդեցությունը մթնոլորտային օդի վրա կառուցապատման ժամանակ ունի չափավոր բացասական նշանակություն: Օդի նշանակալի աղտոտում չի սպասվում, եթե շինարարության պատշաճ գործելակերպ և սարքավորում կիրառվի:

Շին. աշխատանքների ժամանակ մեքենաների արտանետումները անխուսափելիորեն որոշակի ազդեցություն կունենան տվյալ տեղանքի մթնոլորտային օդի որակի վրա, չնայած, այդ ազդեցությունն այնքան քիչ կլինի, որ հնարավոր չի լինի այն բացահայտել:

Նախնական գնահատման հայտում ներկայացված են բոլոր այն միջոցառումները, որոնք միտված են մեղմելու շինարարական փուլում առաջացող վնասակար ազդեցությունները:

1.8 Շահագործման փուլ

1.8.1 Խմելու-տնտեսական կարիքներ ջրապահանջի հաշվարկ

Խմելու տնտեսական կարիքների համար խմելու որակի ջրի հաշվարկը կատարվում է՝

$$W_{\text{խմ. տնտ.}} = n \cdot N \cdot T \text{ քանաձևով, որտեղ՝}$$

n - 1 հանգստացողի համար ջրի ծախսի նորման է՝ 200 լ,

N - հանգստացողների քանակը՝ 560 մարդ,

T – հանգստի գոտում ապրելու ժամանակը տարվա կտրվածքով՝ 365 օր:

$$W = n \times N \times T = 120 \times 560 \times 365/1000 = 24528 \text{ մ}^3/\text{տարի կամ } 67.2 \text{ մ}^3/\text{օր}$$

Օգտագործման ընթացքում ջրի անվերադարձ կորուստը կազմում է $\approx 12\%$:

$$W_{\text{կոր.}} = 24528 \times 0.12 = 2943 \text{ մ}^3/\text{տարի կամ } 8.06 \text{ մ}^3/\text{օր}$$

Կենսաբանական մաքրման կայան ուղղվող հոսքաջրերի քանակը կկազմի՝ 59.136 մ³/օր կամ 21584.64:

Հաշվարկը իրականացված է հաշվի առնելով հանգստի գոտ առավելագույն զբաղվածության ցուցանիշներով:

1.8.2 Ոռոգման և ջրցանման կարիքների համար ջրապահանջի հաշվարկը

Ջրի ծախսը 1 քառ.մ կանաչ տարածքի ջրման համար՝ n

n₁՝ գազոններ - 4 լ

Կանաչ տարածք (S)¹՝ 24175 մ²,

ջրման օրական հաճախականությունը (K)¹՝ 1 անգամ,

ջրման օրերի թիվը տարվա կտրվածքով (N)¹՝ 180 օր:

Ջրապահանջը կկազմի՝

$$W_{\text{ոռ. ջրց.}} = (n_1 \times S_1) \times K = (4 \times 24175)/1000 \times 1 = 96.7 \text{ մ}^3/\text{օր}$$

$$W_{\text{ոռ. ջրց.}} = 96.7 \times 180 = 17406 \text{ մ}^3/\text{տարի}$$

Ոռոգման ջրցանման համար ջուրն ամբողջությամբ օգտագործվում է անվերադարձ:

1.8.3 Մաքրման կայան

Կենցաղային կեղտաջրերը սանիտարական սարքերից ինքնահոս հավաքվում և հեռացվում են ներքին ցանցի միջոցով դեպի կոյուղու բակային ցանց: Կոյուղու բակային ցանցը նախատեսված է միացնել 2 հատ կեղտաջրերի մաքրման կենսաբանական կայանի:

Ցանցերի վրա նախատեսված են դիտահորեր ստուգումներ կատարելու և հետագա շահագործելու համար:

Հանգստյան գոտու շրջակայքում կեղտաջրերի հեռացման կոլեկտոր չկա, ուստի հոսքաջրերի մաքրման համար ընտրվելու է կենսաբանական մաքրման կայան, որը կապահովի Սևանա լճի համար հաստատված նորմերը: Համաձայն մաքրման կայանի անձնագրային տվյալների մաքրված ջրերը համապատասխանում են

ձկնատնտեսական ջրամբարների նորմերին և համապատասխան վնասագերծումից հետո կարող են օգտագործել նաև ոռոգման նպատակով, իսկ ավելցուկը լցնել լիճ:

Հարկ է նշել, որ ոռոգման շրջանում (180օր) մաքրված ջրերը օգտագործվելու են միայն ոռոգման նպատակով:

Ինչպես նշվեց նախորդ ենթաբաժնում կեղտաջրերի առավելագույն օրական ծավալը նախատեսվում է 59.136մ³/օր:

Նմանատիպ տեխնիկական ցուցանիշներով կայան է հանդիսանում § ՅՈՒԲԱՍ 200՝ տեսակի մոդուլային կենսաբանական մաքրման կայանը, սակայն պատվիրատուն իր հայեցողությամբ կարող է տեղադրել նաև նմանատիպ կամ ավելի լավ ցուցանիշներով մաքրման կայան: Նախատեսվում է տեղադրել § ՅՈՒԲԱՍ 200՝ տիպի մաքրման կայան, ինչը լիովին համապատասխանում է հանգստի գոտու հանգստացողների առավելագույն քանակին՝ 560 մարդ: Առաջարկվող մաքրման կայանի արտադրողականությունը ըստ տեխնիկական պարամետրերի կազմում է 33 մ³/օր կամ 200 մարդ, այսպիսով տեղադրելով երեք մաքրման կայան լիովին կապահովվեն դեպի մաքրման կայան ուղղվող 59.136մ³ հոսքաջրերի մաքրումն:

Հաշվարկի արդյունքները բերված են աղյուսակ 10-ում:

Աղյուսակ 10.

№	Ցուցանիշի անվանումը	Աղտոտող նյութերի քանակը, գ/օր	Կոնցենտրացիա, մգ/լ
1.	Կախված նյութեր	14784	250
2.	ԹԿՊԼՐԻՎ	12235	206.9
3.	Կապված ազոտ (ամոնիումի աղերի)	2448	41.4
4.	Ֆոսֆատներ	1009	17.07
5.	Քլորիդներ	2753	46.55
6.	Մակերեսային ակտիվ նյութեր (ՊԱԵ)	763	12.9

Ընտրված կայանները ապահովում են մաքրման հետևյալ մակարդակը

Աղյուսակ 11

№	Ցուցանիշի անվանումը	Կոնցենտրացիա, մ·/լ	Ձկնատնտեսական ջրամբարների չափանիշները, մ·/լ
1.	ԹԿՊ5	2.0	2.0
2.	ԹՔՊ	30	չի նորմավորվում
3.	Կապված ազոտ (ամոնիումի աղերի)	2.0	չի նորմավորվում
4.	Ֆոսֆատներ	3.5	չի նորմավորվում
5.	Նիտրիտներ	3.3	չի նորմավորվում

6.	Նիտրատներ	45	չի նորմավորվում
7.	Մնացորդային ազատ և կապված քլոր	բացակայություն	բացակայություն
8.	Մակերեսային ակտիվ նյութեր (ՊԱԲ)	0.5	0.5

Կայանի մաքրման արդյունավետությունը համապատասխանում է ձկնատնտեսական ջրամբարների պահանջներին:

Մաքրման կայանի տեղադիրքը ներկայացված է գլխավոր հատակագծի վրա, 1908մ մ բացարձակ նիշից բարձր:

§3ՈՒԲԱՍ 200՝ կենցաղային կեղտաջրերի մաքրման կայանը (ՄԿ) նախատեսված է տնտեսական կենցաղային կեղտաջրերի վնասազերծման համար: Կայանը ապահովում է մաքրման այնպիսի աստիճան, որը նախատեսված է Մակերեսային ջրերը աղտոտումից պահպանելու սանիտարական նորմերով և կանոններով (ГОСТ 25298-82) և ՇՆ և Կ-40-03-99 ու ՇՆ և Կ 2.04.03-85 «Ջրահեռացում Արտաքին ցանցեր և կառույցներ»:

Կայանը համապատասխանում է ՌԴ ՏՊ-4859-002-54899623-2003 պահանջներին: Կայանի բոլոր մասերը, որոնք շփման մեջ են գտնվում կեղտաջրերի հետ, պատրաստված են չժանգոտող կայուն նյութից՝ պոլիպրոպիլենից, որն ապահովում է դրանց աշխատանքի երկարակեցությունը (ոչ պակաս քան 50 տարի):

2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅՐ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԽԵՄԱՆ


2.1 Նախատեսվող գործունեության տարածքի ֆիզիկա-աշխարհագրական նկարագիրը և լանդշաֆտը

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է ՀՀ Գեղարքունիքի մարզում, Արեգունի լեռների հարավային լանջին, Սևանա լճի ավազանի Դրախտիկ գետի ափին, մարզկենտրոնից 61 կմ հյուսիս-արևելք :

Ռելիեֆը անհարթ բլրային է: Մակերևույթի ընդհանուր թեքությունը հարավ-արևելյան ուղղությամբ է: Տարածաշրջանի մակերևույթի բարձրությունները տատանվում են 1898-2000 մ սահմաններում: Տարածքը լեռնատափաստանային է, իրեն բնորոշ բուսականությամբ՝ հատիկաբուսականության գերակշռությամբ, բլրի արանքներում և քարակույտերի մոտ թփերի և առանձին ծառերի առկայությամբ:

Սևանի ավազանի արևմտյան և հյուսիս-արևմտյան ափամերձ տարածքները բնորոշվում են ռելիեֆի տիպիկ հրաբխային կառուցվածքով: Հրաբխային լավաների հոսքահետքերը, հասնելով մինչև լճի ափամերձ տարածքները՝ առաջացրել են արևմտյան ափի բազմաթիվ ծովախորշեր, հրվանդաններ, երբեմն հզոր քարաբեկորների ձևով՝ ընդհուպ մինչև լիճը: Տարածաշրջանում ռելիեֆը բլրաշատ ափսեաձև իջվածքներով է, թույլ բլրակային, աննշան կոնաձև իջվածքներով: Ռելիեֆի այսպիսի ձևերը օժանդակում են մթնոլորտային տեղումների արագորեն ներծծվելուն և

մակերեսային հոսք համարյա չի ձևավորվում: Ջրի հատակից դուրս եկած առափնյա շերտը կազմված է ավազա-կավային և գելենչիկային նստվածքներից:



Նկար 1. Հայաստանի Հանրապետության լանդշաֆտային գոտիները

2.2 Հատուկ պահպանվող տարածքներ, բնության հուշարձաններ

Ինչպես նշվել է, նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է ՀՀ Գեղարքունիքի մարզի Շողակաթ համայնքի Դրախտիկ գյուղի ավամերձ տարածքում, որը տեղակայված է "Սևան" ազգային պարկի սահմաններում:

Պարկը գտնվում է հայկական հրաբխային լեռնաշխարհի հյուսիսային մասում, Երևան քաղաքից մոտ 60 կմ հեռավորության վրա: Պարկի ընդհանուր տարածքը՝ Սևանա լճի հայելու հետ միասին կազմում է 147343 հա, իսկ առանց լճի հայելու՝ 22585 հա:

"Սևան" ազգային պարկի տարածքը բաժանվում է 4 տարածքագործառնական գոտիների՝ արգելոցներ, արգելավայրեր, ռեկրեացիոն և տնտեսական: Պարկի

տարածքում կան 4 արգելոցներ՝ "Նորաշենի", "Լիճք-Արգիշի", "Գիլլի" և "Արտանիշի", որոնց ընդհանուր մակերեսը կազմում է 7464 հա, որից ցամաքային տարածքը՝ 4289 հա, իսկ ջրայինը՝ 3175 հա, 2 արգելավայրեր՝ "Գավառագետի" և "Գիհի-կաղնուտային ռելիկտային", որոնց ընդհանուր մակերեսը կազմում է 2652 հա, որից ցամաքային տարածքը՝ 2359 հա, իսկ ջրայինը՝ 293 հա, 4753 հա ընդհանուր մակերեսով ռելիկտացիոն և 11266 հա ընդհանուր մակերեսով տնտեսական գոտի:

Նախատեսվող գործունեության տարածքին ամենամոտը "Արտանիշի" արգելոցն է՝ հեռավորությունը 5 կմ:

" Արտանիշի " արգելոց

<<Արտանիշի>> արգելոցը գտնվում է ազգային պարկի արևելյան մասում, ընդգրկում է Արտանիշ թերակղզին (բացառությամբ ձախակողմյան հատվածի՝ Շորժա համայնքային հողերը) և Արտանիշի լճախորշի թերակղզուն հարող մասը: Տարածքը զբաղեցնում է 3640 հա մակերես, որից 2142 հա ցամաքային տարածք, իսկ 1498 հա՝ ջրային: Սահմանի ընդհանուր երկարությունը 25.9 կմ է: Արգելոցի տարածքը ձգվում է մոտ 11.7 կմ երկարությամբ և 7.8 կմ լայնությամբ: Արգելոցի նպատակն է ապահովել Արտանիշ թերակղզու մինչսառցային ժամանակաշրջանի բազմազան ռելիկտային բուսականության, գիհու նոսրանտառների և տափաստանների, ինչպես նաև որպես հազվագյուտ կենդանիների (գորշ արջ, այծյամ, վարազ, բեզոարյան այծ, ազնվացեղ եղջերու և այլն) միգրացիայի միջանցքի պահպանությունը:

Բնության հուշարձաններ

Բնության հուշարձանները բնության բացառիկ կամ տիպիկ, գիտական, պատմամշակութային և գեղագիտական հատուկ արժեք ներկայացնող բնական օբյեկտներ են:

Համաձայն 14 օգոստոսի 2008 թվականի N 967-Ն <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> որոշման Դրախտիկ համայնքի մոտ առկա է միայն մեկ կենսաբանական տիպի բնության հուշարձան՝ ենթալպյան մարգագետին

2.3 Տարածաշրջանի հիդրոերկրաբանությունը

Ուսումնասիրվող շրջանը բնութագրվում է կտրուկ կտրտված բլրային ռելեֆով, խորը ձորակներով, որոնցով հոսում են Գետիկ, Դրախտիկ, Աղբեք լեռնային արագահոս գետերը իրենց բազմակի վտակներով: Նշված գետերը հիմնականում սնվում են աղբյուրներից, ձնհալից, տեղումներից և ունեն սեզոնային բնույթ:

Դիտարկվող տարածքում ստորգետնյա բացակայում են :

Ստորգետնյա ջրերը հիմնականում կապված են.

ա) վերին կավճի հասակի կրաքարերի և ուլտրահիմքային ու հիմքային ապարների կոնտակտի հետ, որոնք բնական աղբյուրների տեսքով դուրս են գալիս երկրի մակերես: Ջրամերժ շերտերը հանդիսանում են ուլտրահիմքային ապարների կոտրատված մասսան (մագնետիզացված և սերպենտինիտիզացված դունիտները ու սերպենտինիտները), որոնք վեր են ածվել կավանման առաջացումների:

բ) Այլովիալ-դեյովիալ առաջացումների հետ կապված գրանտային ջրեր, որոնք փոքր բնական աղբյուրների տեսքով դուրս են գալիս Դրախտիկ գետի միջին և վերին հոսանքներում, ունեն սեզոնային բնույթ:

Շրջանում մթնոլորտային տեղումների տարեկան միջին քանակը չի գերազանցում 600մմ–ը, որոնց մի մասը ներծծվելով ապարների շեղքերով ու ծակոտիկներով, բեռնաթափում են սեզոնային բնույթի աղբյուրների տեսքով, իսկ մյուսը ժամանակավոր հոսքերի տեսքով հոսում են դեպի Սևանա լիճ:

2.4 Կլիման և օդերևութաբանական պայմանները

Տարածաշրջանի կլիման չորային է: Տարվա տաք կեսին դիտվում են նաև խորշակային եղանակներ՝ խոնավության նվազագույն արժեքներով: Ձմռանը գերիշխում է պարզ արևոտ թույլ սառնամանիքներով եղանակը (15-17 օր ամսվա ընթացքում): Սևանի ավազանի և Արարատյան դաշտի օդային կապը ավելի պարզ է արտահայտվում, երբ ամռանը Սևանի ավազան են ներթափանցում Արարատյան դաշտի տաք և չոր օդային զանգվածները: Ամառը տաք է, չոր և անհողմ: Գարնանից ամառ անցումը տեղի է ունենում աստիճանաբար՝ շնորհիվ լճի ջրային ավազանի ազդեցության: Ամսվա մեջ 14-16 օր գերիշխում է "արևոտ չափավոր խոնավ" եղանակային տիպը: Ձմեռը չափավոր ցուրտ է, գերիշխում է թույլ սառնամանիքային անհողմ եղանակ (օրվա միջին ջերմաստիճանը -2.5 -ից +2.5° C է):

2.4.1 Ջերմաստիճանը

Թերմիկ ռեժիմը բավականին բարենպաստ է՝ տարեկան միջին ջերմաստիճանը 5.3°C, ամենատաք ամսվանը 15.5°C (օգոստոս), ամենասառը ամսվանը՝ -5.5°C (հունվար): Բացարձակ նվազագույն ջերմաստիճանը կազմում է -33°C, իսկ բացարձակ առավելագույնը՝ 33°C:

Աղյուսակ 3. Օդի միջին ամսական և տարեկան ջերմաստիճանը, օC

Բնակավայրի օդերևութաբանական կայանի անվանումը	Բարձրություն ծովի մակարդակից, մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, °C											Միջին տարեկան, °C	Բացարձակ նվազագույն, °C	Բացարձակ առավելագույն, °C	
		Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր				Դեկտեմբեր
Սևան լճային (լճ.)	1917	-5.5	-5.3	-1.9	3.5	8.4	12.4	15.7	15.9	12.8	8	2.5	-2.8	5.3	-33	33

2.4.2 Խոնավությունը

Տարածաշրջանում հարաբերական խոնավությունն 6-7%-ով ցածր է քան մյուս տարածքային հատվածներում: Հարաբերական խոնավությունը առավոտյան ժամերին 6 2 % է, իսկ ցերեկը հասնում է 55%-ի: Միջին խոնավության ցուցանիշները տատանվում են 68-75% միջակայքում:

Տարեկան միջին արժեքը 72%:

Աղյուսակ 4. Օդի հարաբերական խոնավության տվյալները

Բնակավայրի, օրերու թվաքանակի և անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %													Միջին ամսական ժամը 15-ին	
	ըստ ամիսների												Միջին տարեկան, %	ամենացուրտ ամսվա, %	ամենաշոգ ամսվա, %
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
Սևան լճային (լճ.)	74	75	74	71	74	73	73	73	69	68	71	74	72	67	63

2.4.3 Մթնոլորտային տեղումները

Տարածաշրջանում տարվա տաք կեսին դիտվում են 349 մմ տեղումներ, որոնք ուղեկցվում են նաև ամպրոպային երևույթներով: Տարվա տաք կեսին դիտվում են նաև խորշակային եղանակներ՝ խոնավության նվազագույն արժեքներով:

Մթնոլորտային տեղումների տարեկան քանակությունը կազմում է 484 մմ: Չյան ծածկույթը սկսում է ձևավորվել նոյեմբերի երրորդ տասնօրյակից, իսկ 2000 մ-ից բարձր Գեղամա լեռների հյուսիսային լանջերին՝ հոկտեմբերի երկրորդ կեսից: Հաստատուն և կայուն ձյան ծածկույթը ձևավորվում է դեկտեմբերին, որի միջին բարձրությունը հունվար-փետրվար ամիսներին հասնում է 25-35 սմ-ի, իսկ ափամերձ գոտում 10-20 սմ-ի:


Աղյուսակ 5. Մթնոլորտային տեղումները, %

Բնակավայրի, օրերու թվաքանակի և անվանումը	Տեղումների քանակը			միջին ամսական օրական առավելագույն , մմ										Ձևաձածկույթ		
	ըստ ամիսների												Սառելան	Առավելագույն տասնօրյակային բարձրությունը, սմ	Տարվա մեջ ձևաձածկույթով օրերի քանակը	Չյան մեջ շրի առավելագույն քանակը, սմ
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր				
Սևան լճային (լճ.)	14	19	28	53	87	76	49	37	33	43	29	16	484	71	121	-
	13	24	33	29	38	51	56	55	35	55	31	16	56			

2.5 Կենսաբազմազանություն

2.5.1 Բուսական աշխարհ

Հայաստանի տարածքում առանձնացվում է 12 ֆլորիստիկ շրջաններ : Ուսումնասիրվող տեղամասը գտնվում է Սևանի ֆլորիստիկ շրջանում (Հայաստանի Հանրապետության ֆլորիստիկ շրջանները ըստ ակադեմիկոս Ա.Լ. Թախտաջյանի (1954)) : Սևանի ֆլորիստիկ շրջանը Հայաստանում հինգերորդն է բուսատեսակների թվով, որոնց թիվը 1660 է : Ֆլորիստիկ շրջանի բարձրունքային սահմանները գտնվում է (1850 – 3500 մ ծ.մ.) :



Նկար 2. Հայաստանի Հանրապետության ֆլորիստիկ շրջանները ըստ ակադեմիկոս Ա.Լ. Թախտաջյանի (1954)

Բուսականության հիմնական տիպերն են՝ տափաստաններ, մարգագետիններ, կաղնու անտառներ և գիհու նոսրանտառներ: Էնդեմիկ բույսերի քանակը՝ 28 է, Կարմիր գրքում գրանցված բուսատեսակերի թիվը՝ 48 է, ըստ („Կենսաբանական բազմազանության մասին կոնվենցիա,, ՀՀ հինգերորդ ազգային զեկույցից, 2014 թ): Տարածքի ֆլորայի վերաբերյալ գիտական տվյալները սակավաթիվ են, սակայն հավաքվել և վերլուծվել է տվյալ տարածաշրջանին վերաբերող համարյա ամբողջ գիտական տեղեկատվությունը: Հատուկ ուշադրություն է դարձվել տվյալ շրջանին բնորոշ (ՀՀ բույսերի Կարմիր գրքում 2010թ.) գրանցված բույսերի առկայությանը:

Սևանի ավազանի բնական ցամաքային էկոհամակարգերն են՝ մարգագետինները, տափաստանները, անտառային և նոսրանտառային համակեցությունները, ինչպես նաև ժայռա-քարացրոնային և լճի ջրերից ազատված համալիրները : Անտառային լանդշաֆտային էկոհամակարգերը տեղաբաշխված են զառիթափ լեռան լանջերին : Դրանք հիմնականում արևելյան կաղնու (*Quercus macranthera*) և գիհու ոչ մեծ անտառամասեր են՝ արտահայտված առանձին կղզյակներով և փոքրիկ խմբավորումներով : Այդ խմբավորումներն աստիճանաբար փոխարինվում են լեռնա-քսերոֆիլ թփուտների : Ավելի հարավ ընկած տարածություններում տարածված են գիհու և կաղնու անտառների հիմնական խմբավորումները : Ռելիեֆային

առանձնահատկությունների շնորհիվ Սևանի ավազանի բուսականությունն ունի վառ արտահայտված մոզաիկ բնույթ: Ցածրադիր վայրերում աչքի են ընկնում անապատները ու կիսաանապատները, որոնք առաջացել են լճից ազատված ավազուտների վրա և ունեն երկրորդային ծագում: Այդ տեսակներից որպես ռելիկտային համակեցություններ պահպանվել են՝ տորֆային ճահճուտները, քարացրոնային և ժայռային բուսական խմբավորումները, փովոդ թփուտները՝ ցածրաճ գիհուտներ (Juniperus depressa) և այլն: Ուսումնասիրվող տարածքում առկա ծառատեսակներն են՝ Բարդի (Populus), Չիչխան (Hippophae), Սոճի (Pinus): Ուսումնասիրվող տարածքում հանդիպում են հետևյալ բուսատեսակները՝ Rubus caesius, Alopecurus armenus, Spiraea crenata, Sorbus aucuparia, Viburnum lantana, Poa bulbosa, Rhamnus cathartica, Urtica dioica, Gladiolus caucasicus, Lavathera thuringiaca, Bryonia alba, Berberis vulgaris, Papaver orientale, Papaver armeniacum, Papaver paucifoliatum, Nepeta nuda, Nepeta mussinii, Valeriana officinalis, Achillea millefolium, Iris pumila, Polygonum aviculare, Potentilla recta, Chamaenerium angustifolium, Chaerophyllum bulbosum, Chaerophyllum aureum, Dryopteris filix-mas, Phleum pratense, Hypericum polygonifolium, Hypericum perforatum, Hypericum hyssopifolium, Rosa boissieri, Rosa spinosissima, Vicia cracca, Pyrus caucasica, Alcea rugosa, Filipendula vulgaris, Artemisia austriaca, Artemisia absinthium:

Տարածաշրջանին բնորոշ, ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված տեսակները բերված են աղյուսակ 6-ում : Սակայն հարկ է նշել, որ ուսումնասիրվող տարածքում և դրա շրջակայքում չկան ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված տեսակներ : Աղյուսակում թվարկված տեսակները հիմնականում հանդիպում են Արտանիշի թերակղզում և Արտանիշ, Շորժա, Բաբաջան, Դարա համայնքների շրջակայքում :

Աղյուսակ 6: ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված տեսակները

N	Անվանումը	Լատ. Անվանումը	ՀՀ Կարմիր գիրք
1	Եզնակոխ Սոսնովակու	Bupleurum sosnowskyi	VU
2	Խոզանափուշ Ֆյոդորովի	Cousinia fedorovii	EN
3	Կղմուխ անցողուն	Inula acaulis	EN
4	Վառվռուկ Հայաստանի	Alyssum hajastanum	EN
5	Լրջուն Սևանի	Isatis sevangensis	CR
6	Ճակնդեղ խոշորարմատ	Beta macrorhiza	VU
7	Գազ Սուկաչովի	Astragalus sukaczewii	VU
8	Գառնառվույտ հայկական	Oxytropis armeniaca	EN
9	Գառնառվույտ լազիստանյան	Oxytropis lazica	EN
10	Հիրիկ նրբագեղ	Iris elegantissima	EN
11	Վիշապազլուխ ավստրիական	Dracocephalum austriacum	EN
12	Կուժկոտրուկ Վոլգայի	Adonis wolgensis	CR
13	Արոսենի հայաստանյան	Sorbus hajastana	VU

Նկար 3. Տարածաշրջանում հանդիպող բուսատեսակները



Ծորենի սվորական - *Berberis vulgaris*



Սրոհունդ մշտիկատերևանման - *Hypericum hyssopifolium*



Կատվադաղձ մերկ - *Nepeta nuda*



Լավատեր թուրինգիական - *Lavatera turingiaca*



Սիզախոտ մարգագետնային - *Phleum pratense*



Դաշտավունկ սոխուկակիր - *Poa bulbosa*



Մատիտեղ ճնճողուկի - Polygonum aviculara



Ասպիրակ աղեղնեզր - Spiraea crenata

Բույսերի հիմնական բազմազանությունը տարածված է քարակույտերի և չինգիլների մոտ, հիմնականում հանդիպում են՝ ազնվամորի (*Rubus idaeus*), վարդ առաստափուշի (*Rosa spinosissima*), մասրենի Հրաչի (*Rosa hrachiana*) և ասպիրակ աղեղնեզրի (*Spiraea crenata*) մացառուտները :

Տարածաշրջանում որպես էնդեմիկ բուսատեսակ հանդիպում է գայլաթաթը (*Alchemilla sevagensis*) :

2.5.2 Կենդանական աշխարհ

Հավաքվել և վերլուծվել է տվյալ տարածաշրջանի ֆաունայի վերաբերյալ գրեթե ամբողջ գիտական տեղեկատվությունը: Հատուկ ուշադրություն է դարձվել տվյալ տարածաշրջանին բնորոշ (ՀՀ կենդանիների Կարմիր գրքում 2010թ.) գրանցված կենդանիների առկայությանը:

Տարածաշրջանին բնորոշ, ՀՀ կենդանիների Կարմիր գրքում գրանցված տեսակները բերված են աղյուսակ 8-ում : Սակայն հարկ է նշել, որ ուսումնասիրվող տարածքում և դրա շրջակայքում չկան ՀՀ կենդանիների Կարմիր գրքում գրանցված տեսակներ : Աղյուսակում թվարկված տեսակները հիմնականում հանդիպում են Արեգունու լեռների բարձրադիր հատվածներում, « Արտանիշի » արգելոցում և Շորժա համայնքի շրջակայքում :

Աղյուսակ 7. Տարածաշրջանում հանդիպող կենդանատեսակները

№	Կենդանու հայերեն անվանումը	Կենդանու լատիներեն անվանումը
1	Թխակապույտ աղավնի	<i>Columba livia</i>
2	Ժուլան	<i>Lanius collurio</i>
3	Լոր	<i>Coturnix coturnix</i>
4	Խայտաբղետ քարակեռնեխ	<i>Monticola saxatilis</i>
5	Հայկական որոր	<i>Larus armenicus</i>
6	Հոպոպ	<i>Upupa epops</i>
7	Մեծ ճուռակ	<i>Buteo buteo</i>

№	Կենդանու հայերեն անվանումը	Կենդանու լատիներեն անվանումը
8	Մոխրագույն ագռավ	Corvus corone
9	Մոխրագույն արտույտ	Calandrella rufescens
10	Մոխրագույն կաքավ	Perdix perdix
11	Ներկարար	Coracias garrulus
12	Ոսկեգույն մեղվակեր	Merops apiaster
13	Պարող քարաթռչնակ	Oenanthe isabellina
14	Ջրածիծառների տեսակներ	Chlidonias
15	Սև կեռնեխ	Turdus merula
16	Սևաճակատ շամփրուկ	Lanius minor
17	Սևավիզ քարաթռչնակ	Oenanthe finschii
18	Սովորական կաչաղակ	Pica pica
19	Սովորական հողմավար բազե	Falko tinnunculus
20	Սովորական ճայ	Corvus monedula
21	Սովորական որոր	Larus ridibundus
22	Սովորական սարյակ	Sturnus vulgaris
23	Սովորական սիտեղ	Sitta europaea
24	Սովորական քարաթռչնակ	Oenanthe oenanthe
25	Տափաստանային արծիվ	Aquila nipalensis
26	Տափաստանային արտույտ	Melanocorypha calandra
27	Փուփովավոր արտույտ	Galerida cristata
28	Աղվես	Vulpes vulpes
29	Աքիս	Mustela nivalis
30	Գորշուկ/ Փորսուղ	Meles meles
31	Դաշտամկներ	Microtinae
32	Համստեր	Cricetus cricetus
33	Ձյան դաշտամուկ	Chionomys nivalis
34	Նապաստակ	Lepus europaeus
35	Գայլ	Canis lupus
36	Ենազայլ	Canis aureus
37	Քարակզաքիս	Martes foina

Աղյուսակ 8: ՀՀ կենդանիների Կարմիր գրքում գրանցված տեսակները

N	Անվանումը	Լատ. Անվանումը	ՀՀ Կարմիր գիրք
Անողնաշարավոր կենդանիներ			
Դաս Միջատներ - Insecta			
Կարգ Ուղղաթևեր - Orthoptera			
1	Սորեխի հայկական	Gomphocerus armeniacus	VU
Կարգ Կարծրաթևեր կամ Բզեզներ - Coleoptera			
2	Սևանյան գնայուկ	Dyschirius sevanensis	EN
Կարգ Թեփուկաթևեր կամ Թիթեռներ - Lepidoptera			
3	Ավրորինա դեղնաթիթեռ	Colias aurorina	VU
4	Բրենթիս Ինո	Brenthis ino schmitzi	VU
5	Ալկոն կապտաթիթեռ	Maculineaalcon monticola	VU
6	Արիոն կապտաթիթեռ	Maculinea arion zara	VU
7	Մթնշաղային կապտաթիթեռ	Maculinea nausithous	VU
8	Նինայի կապտաթիթեռ	Agrodiaetus ninae	VU
Կարգ Կաղանթաթևեր - Hymenoptera			
9	Իշամեղու մարգագետնային	Bombus pratorum	VU
Ողնաշարավոր կենդանիներ			
Դաս Սողուններ - Reptilia			
Կարգ Սողեսներ - Sauria			
10	Մարգագետնային մողես	Darevskia praticola	VU
Կարգ Օձեր - Serpentes			
11	Լեռնատափաստանային իծ	Vipera (Pelias) eriwanensis	VU
Դաս Թռչուններ - Aves			
12	Մոխրաայտ սուզակ	Podiceps grisegena	VU
13	Կարմիր բաղ	Tadorna ferruginea	VU
14	Տափաստանային արծիվ	Aquila nipalensis orientalis	VU
15	Տափաստանային հողմավար բազե	Falco naumanni	VU
16	Սապասան	Falco peregrinus	VU
17	Ներկարար	Coracias garrulus	VU
Դաս Կաթնասուններ - Mammals			
Կարգ Միջատակերներ - Insectivora			
18	Շելկովնիկովի կուտուրա	Neomys schelkovnikovi	EN
19	Պատիկ սպիտակատամ	Suncus etruscus	VU
Կարգ Ձեռքաթևավորներ - Chiroptera			
20	Գորշ ականջեղ	Plecotus auritus	VU
Կարգ Գիշատիչներ - Carnivora			
21	Գորշ արջ	Ursus arctos	VU
Կարգ Չույզամբակավորներ - Artiodactyla			
22	Բեզոարյան այծ	Capra aegagrus	VU

Նկար 4. Տարածաշրջանում հանդիպող կենդանատեսակներ



Աքիս - *Mustela nivalis*



Դաշտամկներ - *Microtinae*



Նապաստակ - *Lepus europaeus*



Ջամստեր - *Cricetus cricetus*



Լոր - *Coturnix coturnix*



Տափաստանային արծիվ - *Aquila nipalensis*



Ներկարար - *Coracias garrulus*



Սովորական հողմավար բազե - *Falco tinnunculus*



Ջոպոպ - *Upupa epops*



Ջայկական որոր - *Larus armenicus*

2.6 Նախատեսվող գործունեության տարածաշրջանի սոցիալ-տնտեսական վիճակը մոտակա գյուղական համայնքների նկարագրերը

Շողակաթ, համայնք ներառում է Աղբերք, Շողակաթ, Արտանիշ, Դրախտիկ, Ծափաթաղ, և Ջիլ գյուղերը: Համայնքը ստեղծվել է 2017թվականի հունիսի 9-ին ՀՀ Ազգային ժողովում համայնքների խոշորացման օրինագծով: Կենտրոնը Շողակաթ գյուղն է: Համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների առաջին ընտրությունները կայացել են 2017 թվականի նոյեմբերի 5-ին:

Շողակաթ գյուղը / նախկինում՝ Շորժա/ հիմնադրվել է 1810-ական թվականներին Ռուսաստանի Սոլդովիայի մարզից եկած աքսորականների միջոցով: Գյուղը նախկինում կրել է Նադեժդինո անվանումը: 1932 թ. Նադեժդինո գյուղը վերանվանվել է Շորժա:Գտնվում է Սևանա լճի ափից 200 մ հեռավորության վրա, մարզկենտրոնից 95 կմ հյուսիս –արևելք :Բնակչությունը նախկինում եղել է միատար, բնակվել են միայն մոլոդավացիներ: 20-րդ դարի սկզբից գյուղում բնակություն են հաստատել նաև թրքախոս աղկոյանլու և կարակոյանլու ցեղի ներկայացուցիչներ: 1989-1992 թթ. գյուղը վերաբնակեցվել է Աղբեջանից եկած փախստականներով և Արծվաշենից բռնի տեղահանվածներով: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1930-1980 մ բարձրության վրա: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, այգեգործությամբ, բանջարաբուծությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ: Ունի քրոմիտի պաշարներ: Գյուղի միջով է անցնում Երևան-Ձողավտոճանապարհը և Երևան-Ձող երկաթուղին: Գյուղում գործում է միջնակարգ դպրոց, նախակրթարան, բուժկետ, երկաթուղային կայարան, օդներևութաբանական կայան, մի քանի հանգստյան տներ: Գյուղում և շրջակայքում պահպանվել են մ.թ.ա. 1-ին հզմ. բերդի ավերակներ, դամբարաններ/ մ.թ.ա. 2-րդ -1-ին հզմ/ ,եկեղեցի / 17-րդ դար/ մատուռներ և այլ հնություններ:

Աղբերք բնակավայրը գտնվում է Արեգունի լեռների հարավ – արևելյան մասից դեպի Արտանիշի թերակղզի իջնող ճանապարհի վրա ,մարզկենտրոնից 68 կմ հյուսիս արևելք: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 2150 մ բարձրության վրա: Աղբերք է վերանվանվել 1991 թ. նախկինում կոչվել է Աղբուլաղ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ,հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ: Գյուղից հյուսիս պահպանված է հայկական հին գերեզմանոց/ 17-18-րդ դդ/ / Աղբուլաղ/ : Արտանիշ բնակավայրը գտնվում է Սևանա լճի Արտանիշի ծոցի ափին : Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1975 մ բարձրության վրա: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, դաշտավարությամբ: Գյուղի արևմտյան եզրին է գտնվում Արտանիշի /մ.թ.ա. 2-րդ 1-ին հզմ/ ,իսկ հարավային մասում՝ Դաշալեռ /մ.թ.ա. 1-ին հզմ / կիկլոպյան ամրոցներ: Արտանիշից ոչ հեռու կան երեք եկեղեցիներ/Արտավուճ Արտունջ/;

Ջիլ բնակավայրը գտնվում է Սևանի լեռների լճահայաց լանջին , Վարդենիս տանող ճանապարհին , Ջիլ գետակի ափին: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 2040 մ բարձրության վրա : Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ , հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ : Գյուղի

հյուսիսային եզրին՝ թեք սարավանջին կա եկեղեցի / 16-17 –րդ դ.դ. /, իսկ հյուսիս արևելյան մասում՝ 15-18-րդ դդ .խաչքարերով գերեզմանոց /Ճիլ/:

Դրախտիկ բնակավայրը /նախկինում՝ Թոխլուջա/ գտնվում է Արեգունի լեռների հարավային լանջին, Սևանա լճի ավազանի Դրախտիկ գետի ափին, 1991 թվականին վերանվանվել է իր հին՝ Մեծ Հայքի Սյունիք աշխարհի Սոթք գավառում հիշատակվող Դրախտիկ անվամբ: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1980 մ բարձրության վրա: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ ,հացահատիկի մշակությամբ : Գյուղի մոտակայքում կան հին եկեղեցու ավերակներ ,մի քանի խաչքար , գյուղատեղի և գերեզմանոց/ 15-19-րդ /:

Ծափաթաղ բնակավայրը գտնվում է Սևանի լեռների հարավ արևմտյան լանջին, Տանձուտ գետի գետաբերանի շրջանում մարզկենտրոնից 100 կմ հյուսիս արևելք: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1950 մ բարձրության վրա: Ծափաթաղ վերանվանվել է 1991թ. : Բնակչության մեծ մասը 1988-1989-ին Ադրբեջանից բռնագաղթվածներ են : Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի մշակությամբ: Գյուղից 3 կմ արևելք կա դամբարանադաշտ / մ.թ.ա. 2-րդ - 1-ին հազարամակ, 1,5 կմ հարավ արևելք՝ խաչքարերով գերեզմանոց/ 14-18 –րդ դդ/ /Կզլքենդ/

Բնակչությունը, բնակչության սոցիալական կազմը

	2018թ.
1. Մշտական բնակչության թվաքանակը	3364
2. Գրանցված ծնունդների քանակը	43
2.Մահացության դեպքերի քանակը	62
3.Ամուսնությունների քանակը	25
4. Ամուսնալուծությունների քանակը	8
5. Տնային տնտեսությունների թիվը	1205
6. Ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսությունների քանակը	163

Մշայութային, կրթական, մարզական հաստատություններ

	2018թ.
1. Գրադարանների քանակը	0
2. Արվեստի դպրոցների քանակը	0
3. Երաժշտական դպրոցների քանակը	0
4. Նախադպրոցական հիմնարկների քանակը	4՝ որից << Զիլի մսուր-մանկապարտեզ>> ՀՈԱԿ-1, մոբիլ մանկապարտեզ՝ - 2 , վաղ մանկական զարգացման ակումբ -1
5. Հանրակրթական դպրոցների քանակը	6
6. Նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունների քանակը	0
7. Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների քանակը	0
8. Բարձրագույն ուսումնական հաստատությունների քանակը	0
9. Մարզադպրոցների քանակը	0

Համայնքի բնակելի ֆոնդը

	2018թ.
1. Համայնքի բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը (մ ²)	166471
2. Բազմաբնակարան շենքերի ընդհանուր թիվը	3
3. Բնակելի տների (առանձնատների) ընդհանուր թիվը	1481

Հողային ֆոնդ և գյուղատնտեսություն

	2018թ.
1. Հողեր, ընդամենը (հա)	31954.85
2. Գյուղատնտեսական նշանակության հողեր (հա)	23957.94
3. Բնակավայրերի ընդհանուր տարածքը (հա)	600.74
4. Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը	3676
6. Մանր եղջերավոր անասունների (ոչխար և այծ) գլխաքանակը	5025
7. Խոզերի գլխաքանակը	217
8. Գյուղատնտեսական տեխնիկա	
8.1 տրակտորներ (քանակը)	2
8.2 կոմբայններ (քանակը)	2

Ենթակառուցվածքներ

1. Էլեկտրական ենթակայանների քանակը	3
2. Համայնքում գազիֆիկացման առկայությունը (այո, ոչ)	այո
3. Համայնքում աղբավայրի առկայությունը (այո, ոչ)	այո
4. Գերեզմանատան առկայությունը համայնքում (այո, ոչ)	այո
5. Համայնքային ենթակայության ճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	32
6. Կոմունալ և ճանապարհաշինական տեխնիկայի առկայությունը	
6.1 Ինքնաթափ բեռնատար մեքենաների քանակը	0
6.2 Էքսկավատորների քանակը	0
6.3 Թրթուռավոր տրակտորների քանակը	1
6.4 Գրեյդերների քանակը	0
6.5 քանակը	0
6.6 Աղբատար մեքենաների քանակը	1
6.7 Բազմաֆունկցիոնալ կոմունալ մեքենաների քանակը	0
6.8 Վակումային փոշեկուլ մեքենաների քանակը	0
6.9 Ավտոաշտարակների քանակը	0
7. Համայնքի տարածքով անցնող միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	63
8. Համայնքի տարածքում գործող առևտրային բանկերի մասնաճյուղերի առկայությունը (այո, ոչ) և դրանց քանակը	Ոչ
9. Ներհամայնքային երթուղիների առկայությունը (այո, ոչ)	ոչ

2.7 Պատմամշակութային հուշարձաններ

Գեղարքունիքի մարզի բնակավայրերը հարուստ են պատմամշակութային ժառանգությամբ, որը խթան է հանդիսանում այդ մարզում զբոսաշրջության և ռեկրեացիոն գործառույթներն առավել զարգացնելու համար:

Հանրապետության տարածքում գտնվող հուշարձաններն ըստ արժեքավորման չափանիշների դասակարգվում են հանրապետական և տեղական նշանակության: Շողակաթ համայնքի Դրախտիկ գյուղում առկա են միայն տեղական նշանակության հուշարձաններ: Հուշարձանները կարող են օգտագործվել օրենքով սահմանված կարգով՝ գիտական, կրթական, մշակութային և ճանաչողականնպատակներով, ինչպես նաև իրենց սկզբնական ու հարմարեցված գործառնական նշանակությամբ:

Համաձայն 09.01.2003թ. № 80-Ն "Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին" որոշման, համայնքի տարածքում տեղակայված են հետևյալ հուշարձանները

Հոլշար- ձան	Կառուց- ված	Վայր, հասցե	Կոորդ	համարանիշ	Նշան.	հավելյալ նշումներ
Գերեզմանոց	15-19 դդ.	ամ մասում	—	<u>5.32/1</u>	S	գյուղի ամ եզրին, դպրոցից 300 մ ամ
Խաչքար	1554 թ.		—	<u>5.32/1.1</u>	Յ	դպրոցից 100 մ ամ, տնամերձում, զույգ խաչքարերից աջակողմյանը
Խաչքար	16-17 դդ.		—	<u>5.32/1.2</u>	Յ	դպրոցից 100 մ ամ, տնամերձում զույգ խաչքարերից ձախակողմյանը

3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Բոլոր տիպի շինարարական աշխատանքները պետք է կատարել պահպանելով պետ. նորմերը, կանոնները, ստանդարտները, ինչպես նաև նախագծի տեխնիկական պայմանները: Բոլոր տիպի թաքնված աշխատանքների համար պետք է կազմել թաքնված աշխատանքների ակտ տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից հաստատված:

Շին. հրապարակը կազմակերպելիս ղեկավարվել հակահրդեհային անվտանգության վարչության կողմից հաստատված դրույթներով, շին. հրապարակի հակահրդեհային անվտանգության պատասխանատվությունը կրում է անմիջապես շինարարության ղեկավարը կամ նրան փոխարինող անձը:

Երեկոյան ժամերին դադարեցնել աղմկոտ աշխատանքների կատարումը:

3.1 Ռիսկերի գնահատում

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝

- փորման բեռնման աշխատանքների,
- հողային զանգվածների տեղափոխման,
- շինարարական տեխնիկայի շահագործման,
- ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման,
- բետոնային աշխատանքների հետ:

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

Սույն հայտում բերված են հիմնական բնապահպանական միջոցառումները ըստ ազդեցության ուղղությունների:

3.2 Արտանետումների աղբյուրները

Ներկայացվող աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված են արտանետումների հետ, որոնց ցանկը բերված է ստորև՝

- փոշու արտանետումներ հիմքերի փորման ընթացքում
- դիզելային վառելիքի արտանետումներ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ:

3.3 Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն

3.3.1 Մթնոլորտային օդ

Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝

- շինարարական աշխատանքների /փոշի առաջացման աշխատանքներ/ ընթացքում անհրաժեշտ է իրականացնել ջրցան,
- պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգադրում:

3.3.2 Ջրային ռեսուրսներ

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները.

- ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,
- տարածքի հոսքերը հատուկ նախատեսված առվակների միջոցով կմիավորվեն մեկ բակային ցանցում և կմիացվեն սելավային ջրացանցին:
- անձրևվների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերը կուղորդվեն տարածքում տեղադրված 5մ³ ծավալով պարզարան: Անձրևաջրերի նստեցման պարզարանը կտեղադրվի է շին. հրապարակին կից, իրենից ներկայացնում է պլաստմասե տարողություն, որում տեղի է ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ:

3.3.3 Հողային ռեսուրսներ

Հողային ռեսուրսների պահպանության համար նախատեսվում են.

- Շին. աշխատանքների ընթացքում իրականացնել հողերի որակի մոնիթորինգ
- Շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,
- Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող շինարարական թափոնները կպահեստավորվեն տարածքում հատուկ նախատեսված վայրում և կծածկվեն:
- Շինարարական սարքավորումներից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ

տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ:

- Այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար պետք է տեղադրել ավագ կամ մանրախիճ: Այն դեպքերում, երբ մեքենաներից և սարքավորումներից կլինի վառելիքի և/կամ քսայուղերի արտահոսք, ապա պետք է փոփոխված ավագը կամ մանրախիճը տեղափոխել համապատասխան աղբավայր և այն փոխարինել նորով (ամսեկան մեկ անգամ):
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած շինարարական թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,
- տարածքը կբարեկարգվի:

Հողի բերի շերտը օգտահանումը և պահպանումը կիրականացվի հանգստի գոտու տարածքում հատուկ նախատեսված վայրում առաջնորդվելով ՀՀ կառավարության 08.09.2011թ.-ի թիվ 1396-Ն որոշմամբ հաստատված Հողի բերրի շերտի օգտագործման կարգի պահանջներով. հողի ծածկում, պահեստավորված հողի մեկուսացում՝ եզերված պատնեշներով (բորոյուրներ), բացառելով շինարարական աշխատանքների հետևանքով դրա աղտոտումը:

3.3.4 Թափոնների կառավարում

Հանգստի գոտու տարածքում աղբահանության նպատակով տեղադրված են աղբահավաք տարողություններ և աղբարկղներ: Համաձայն ՀՀ Կառավարության 2008թ. դեկտեմբերի 18-ի թիվ 1563-Ն որոշման տեխնիկական բնութագրերի հանգստի գոտու տարածքը անհրաժեշտ է կահավորել աղբամաններով՝ 50 մարդու համար՝ 1 աղբանոթ հաշվարկով, ինչը լիովին ապահովված է ընկերության կողմից: Աղբահեռացումը կատարվում է կանոնավոր:

Նախատեսվող գործունեության ընթացքում (ամբողջ շինարարության ժամանակահատված) կառաջանան կենցաղային աղբ՝ 70-80կգ և շինարարական աղբ՝ 120մ³ ծավալով: Առաջացող շինաղբը կպահվի համապատասխան պարկերով, ծածկի տակ, մինչև տեղափոխումը համայնքի կողմից տրամադրված աղբավայր, տեղափոխումը կիրականացվի ըստ անհրաժեշտության:

3.3.5 Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակներն են՝

- Հրդեհի առաջացումը
- Հեղուկ նյութերի արտահոսքը
- Աշխատողների վնասվածքները
- Շահագործվող տեխնիկայի հետ վթարները:

Արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու համար նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

- Մինչ աշխատանքների սկիզբը ոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդները, անցնում են հրահանգավորում ըստ աշխատանքի անվտանգության կանոնների: Հրահանգավորումը իրականացնում է աշխատանքների ղեկավարը:
- Մինչ աշխատանքների սկիզբը շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հազեցվում են հրդեհաշիջման առաջնային միջոցներով ու դեղարկղիկով, իսկ աշխատողներն անցնում են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժօգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում:
- Հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:
- Բոլոր աշխատողներին տրվելու են անհատական և կոլեկտիվ պահպանության միջոցներ: Հնարավոր վնասվածքների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին բուժօգնության, ապա, անհրաժեշտության դեպքում, կտեղափոխվի քաղաքի մոտակա բժշկական հաստատությունը:

Ըստ նախնական գնահատման, ապահովվելով նշված միջոցառումների պատշաճ մակարդակով իրականացումը, կարելի է արտակարգ իրավիճակների ռիսկը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում արագ և արդյունավետ հակազդել դրանց:

3.3.6 Աղմուկ

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար նախատեսվում է՝

- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- պարբերաբար ստուգել և կարգաբերել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները,
- շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել դրանց աղմուկի մակարդակին:

3.3.7 Կենսաբազմազանություն և էկոհամակարգեր

Նախատեսվող հանգստի գոտու հարակից տարածքները բավականին ուրբանիզացված են: Հանգստի գոտու տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված տեսակներ չեն հայտնաբերվել: Այդուամենայնիվ, շինարարական աշխատանքների ժամանակ ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների պոպուլյացիաների հայտնաբերման դեպքում դրանց պահպանության նպատակով նախատեսվում է.

- 1) Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների նոր պոպուլյացիաների կենսունակության ապահովման նպատակով, առանձնացնել պահպանվող գոտիներ:
- 2) Ժամանակավորապես սահմանափակել առանձնացված պահպանվող գոտիներում տնտեսական գործունեության որոշ տեսակներ, երե դրանք կարող են բերել նշված

բուսատեսակների աճելավայրերի վիճակի վատթարացման ու պոպուլյացիաների կենսունակության խաթարմանը, տեղափոխել պահպանվող բույսերի առանձնյակները տվյալ տեսակի համար նպաստավոր բնակլիմայական պայմաններ ունեցող որևէ բնության հատուկ պահպանվող տարածք կամ բուսաբանական այգիների տարածք, կամ կարմիր գրքում որպես տվյալ բույսի աճելավայր գրանցված որևէ տարածք, իսկ բույսերի սերմերը տրամադրել համապատասխան մասնագիտացված կազմակերպությանը գենետիկական բանկում պահելու և հետագայում տեսակի վերարտադրությունը կազմակերպելու նպատակով: Աշխատանքները կիրականացվեն ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանող որոշման (31 հուլիսի 2014 թվականի N 781-Ն) հիմնադրույթներին համապատասխան:

3) Շինարարական և հողային աշխատանքներ իրականացնելու ժամանակ օգտագործվելու է ջրցան՝ փոշենստեցման նպատակով, ինչը աղտոտումից կպահպանի օդային ավազանը և բնական էկոհամակարգերը, մասնավորապես տեղի բուսականությունը:

4) Որպես կանոն կենդանիները ակտիվ են վաղ առավոտյան և իրիկնամուտին, իսկ որոշ տեսակներ ակտիվ են բացառապես գիշերային ժամերին: Որոշ կենդանատեսակներ շատ զգայուն են աղմուկի նկատմամբ, ուստի կենդանիների կեսակերպի վրա ազդեցությունից խուսափելու համար նախատեսվում ցանկացած աղուկ առաջացնող գործողություն իրականացնել բացառապես ցերեկային ժամերին (շինարարական աշխատանքներ, տրանսպորտի տեղաշարժ և այլն):

5) Կենդանիների բնականոն վարքին կարող է խանգարել նաև տարածքի գիշերային լուսավորությունը, մասնավորապես այն տեսակների, որոնք ակտիվ են գիշերը, լուսադեմին կամ մթնշաղին: Ուստի նախատեսվում մաքսիմալ նվազեցնել տարածքի լուսավորությունը:

4. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ

Հանգստի գոտու շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման/մեղմացմանն ուղղված հեկյալ մշտադիտարկումները.

1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx և այլն) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, երեք ամիսը մեկ հաճախականությամբ
2. Փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրեկան 2-3 անգամ:
3. Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ

4. Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է տարեկան մասնահանել 350 հազ. դրամ, ամբողջ շինարարության ընթացքում 700 հազ. դրամ:

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	ՊԱՐԱՄԵՏՐԵՐ	ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹԻԿ
Ընդհանուր դրույթներ	Նախազգուշացումներ և աշխատողների անվտանգություն	(a) Շինարարության և շրջակա միջավայրի անվտանգությունը վերահսկող մարմինները և համայնքը պետք է նախազգուշացված լինեն սպասվող գործընթացների վերաբերյալ (b) Շինարարության համար անհրաժեշտ բոլոր պահանջվող թույլտվությունները ձեռք են բերվել (c) Կապալառուն պաշտոնապես համաձայնել է, որ աշխատանքները կիրականացվեն ապահով և կարգապահ՝ նվազագույնի հասցնելով ազդեցությունը հարևան տնտեսությունների և շրջակա միջավայրի վրա: (d) Աշխատողների անհատական պաշտպանության միջոցները պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ) (e) Շինհրապարակում տեղադրվող համապատասխան տեղեկատվական վահանակները աշխատողներին կիրազեկեն հիմնական կանոնների և նորմերի վերաբերյալ:
Շինարարական աշխատանքներ	Օդի որակ	(a) Շինաշխատանքների իրականացման ընթացքում հատուկ տարողություններ կկիրառվեն շինարարական աղբի հեռացման համար՝ Նշված տարողությունները պետք է պահպանվեն տարածքում և անընդհատ ցողվեն ջրով՝ թափոններից գոյացած փոշու քանակը նվազեցնելու նպատակով (b) Շրջակա տարածքները (մայթերը, ճանապարհները) պետք է զերծ պահվեն շինարարական աղբից՝ փոշին նվազագույնի հասցնելու նպատակով (c) Շինարարական տրանսպորտային միջոցների պարապուրդ շինհրապարակում չի թույլատրվի:
	Աղմուկ	(a) Շինարարական աշխատանքներից գոյացած աղմուկը կսամանափակվի թույլատրված ժամերի միջակայքում (b) Շինարարական աշխատանքների ընթացքում շարժիչների, օդի կոմպրեսորների և էլեկտրականությամբ սնվող սարքերը պետք է ծածկվեն:

	<p>Թափոնների կառավարում</p>	<p>(a) Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար:</p> <p>(b) Շինարարության արդյունքում գոյացող թափոնները պետք տարանջատվեն ընդհանուր աղբից և կենցաղային թափոններից դեռ շինհրապարակում և ըստ առաջացման տեղափոխվեն հատուկ հատկացված աղբավայր:</p> <p>(c) Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից</p> <p>(d) Թափոնների հեռացման վերաբերյալ գրառումներ պետք է կատարվեն որպես ապացույց, որ թափոնների կառավարումը կատարվում է պատշաճ կերպով, նախատեսվածին համաձայն</p> <p>(e) Հնարավորության դեպքում կապալառուն կարող է պիտանի թափոնները բազմանվագ օգտագործել</p>
<p>Հողային ռեսուրսներ</p>	<p>Հողի որակ</p>	<p>(f) Շին. աշխատանքների ընթացքում իրականացնել հողերի որակի մոնիթորինգ</p> <p>(g) Շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,</p> <p>(h) Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող շինարարական թափոնները կպահեստավորվեն տարածքում հատուկ նախատեսված վայրում և կծածկվեն:</p> <p>(i) Շինարարական սարքավորումներից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ:</p> <p>(j) Այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար պետք է տեղադրել ավագ կամ մանրախիճ: Այն դեպքերում, երբ մեքենաներից և սարքավորումներից կլինի վառելիքի և/կամ քսայուղերի արտահոսք, ապա պետք է փոված ավագը կամ մանրախիճը տեղափոխել համապատասխան աղբավայր և այն փոխարինել նորով (ամսեկան մեկ անգամ):</p> <p>(k) աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած շինարարական թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման</p>

		մարմնի կողմից հատկացված աղբավայր, (l) տարածքը կբարեկարգվի:
Կեղտաջրերի հեռացում	Ջրի որակ	(a) Շինարարական անձնակազմը կօգտվի գոյություն ունեցող կենցաղային միջոցներից, կոյուղաջրերի հեռացումը շինհրապարակից պետք է իրականացվի ներքին ցանցի միջոցով դեպի կոյուղու բակային ցանց (b) Շինարարական տրանսպորտային միջոցները և սարքավորումները պետք է լվացվեն համայնքում գործող մասնագիտացված կետերում:
Հետիոտների և երթևեկության ապահովություն	Շինարարական աշխատանքների հետևանքով հետիոտներին կամ հանրային տրանսպորտին սպառնացող ուղղակի կամ անուղղակի վտանգներ	(a) Շինարարության ազգային նորմերի համաձայն կապալառուն պետք է ապահովի պատշաճ անվտանգություն և շինարարությանն առնչվող երթևեկության կարգավորում, ինչը ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալով. <ul style="list-style-type: none"> ▪ պարզ տեսանելի ցուցանակներ, զգուշացնող նշաններ շինհրապարակում հանրությանը պոտենցյալ վտանգների մասին նախազգուշացնելու համար, պետք է առկա լինեն պատնեշներ և շրջանցող ուղիներ ▪ Անձնակազմի կրթման համակարգ և երթևեկության կառավարման համակարգ, հատկապես՝ շինհրապարակ մուտք գործելու և հարակից տարածքում ծանր տրանսպորտի համար: Հետիոտների համար անվտանգ անցումներ երթևեկության զոնայում: ▪ Համապատասխանեցնել աշխատանքային ժամերը երթևեկության ակտիվության հետ, խուսափել ակտիվ երթևեկությունից՝ մարդկանց ակտիվ տեղաշարժի ժամերին: ▪ Երթևեկության ակտիվ կառավարում շինհրապարակում փորձված և երևացող անձնակազմի կողմից, եթե վերջինս անհրաժեշտ է մարդկանց ապահով և հարմար անցուղարձի համար. ▪ Պետք է ապահովվի ապահով և շարունակական մոտեցում դեպի գործող գրասենյակային շինությունները, խանութները և բնակելի շինությունները շինարարական աշխատանքների ընթացքում:
Արտակարգ իրավիճակներ	Հնարավոր վտանգներ	(c) Մինչ աշխատանքների սկիզբը ոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդները, անցնում են հրահանգավորում ըստ աշխատանքի

		<p>անվտանգության կանոնների: Հրահանգավորումը իրականացնում է աշխատանքների դեկավարը:</p> <p>(d) Մինչ աշխատանքների սկիզբը շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հազեցվում են հրդեհաշիջման առաջնային միջոցներով ու դեղարկղիկով, իսկ աշխատողներն անցնում են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժ.օգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում:</p> <p>(e) Հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:</p> <p>(f) Բոլոր աշխատողներին տրվելու են անհատական և կոլեկտիվ պահպանության միջոցներ: Հնարավոր վնասվածքների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին բուժ.օգնության, ապա, անհրաժեշտության դեպքում, կտեղափոխվի քաղաքի մոտակա բժշկական հաստատությունը:</p>
--	--	---

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ

Գործողություն	Նվազեցնող միջոցառումներ	Որտեղ իրականացնել	Ինչպես իրականացնել	Ժամանակամիջոց	Կատարող
Շինանյութերի մատակարարում	Շինանյութերի գնում արտոնագրված մատակարարներից	Մատակակարի հիմնարկում կամ պահե ս տում	Փաստաթղթերի ստուգում	Մատակարարման պայմանագրերը կնքելու ընթացքում	Կապալառու
Շինանյութերի և թափոնների տեղափոխում Շինարարական տեխնիկայի տեղաշարժ	<ul style="list-style-type: none"> - Մեքենաների և տեխնիկայի համապատասխան տեխնիկական վիճակի ապահովում - Բեռնատարերի բեռնվածության սահմանափակում հերթականության ապահովմամբ - Տեղափոխումների ժամանակացույցի և երթուղիների պահպանում 	<ul style="list-style-type: none"> - Շինհրապարակ - Շինանյութերի և աղբի տեղափոխման երթուղիներ 	Շինհրապարակ տանող ճանապարհների ստուգում	Աշխատանքային ժամերին և դրանցից դուրս անսպասելի ստուգումների իրականացում	Կապալառու
Շինարարական տեխնիկայի շահագործում տեղամասում	<ul style="list-style-type: none"> - Մեքենաների և տեխնիկայի լվացումը պետք է կատարվի շինհրապարակից դուրս , համայնքում գործող մասնագիտացված կետերում - Տեխնիկական միջոցների վառելիքի լիցքավորումը և յուղումը պետք է իրականացվի շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում - շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և 	Շինհրապարակ	Գործընթացների գործունեության ստուգում	Մեխանիզմների շահագործման ընթացքում	Կապալառու

	կայանման վայրերում տեղադրել ավագ կամ մանրախիճ: Վառելիքի և/կամ քսայուղերի արտահոսքի դեպքում փռված ավազը կամ մանրախիճը տեղափոխել համապատասխան աղբավայր և այն փոխարինել նորով: - Իրականացնել հողերի որակի մոնիթորինգ				
Հողային աշխատանքներ	- Հանված հողային զանգվածը օգտագործվում է տարածքում անհարթությունները հարթելու համար	Շինհրապարակ	Գործընթացների ստուգում	Հողային աշխատանքների ընթացքում	Կապալառու
Բուսատեսակներ, աճելավայրերի, պոպուլյացիաների վիճակի մոնիթորինգ	"Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին" ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի պահանջների համապատասխան՝ բացառել բուսական և կենդանական աշխարհի ներկայացուցիչների բնակության միջավայրի պայմանների խախտումը, ինչպես նաև անտառհատումները:	Շինհրապարակ և հարակից տերածքներ	Արտաքին գնում	Շինարարության ողջ ընթացքում	Կապալառու, Ազգային պարկի վերահսկողություն
Իներտ շինանյութերի գնում	- Շինանյութերի գնում վստահելի մատակարարներից	Իներտ նյութերի պահեստ	Փաստաթղթերի ստուգում Գործընթացների ստուգում	Մատակարարման ընթացքում	Կապալառու, մատակարար

Կենցաղային աղբի առաջացում	<ul style="list-style-type: none"> - Աղբամանների տեղադրում շինարարական հրապարակում - համայնքի թույլտվություն աղբի մշտական տեղակայման վերաբերյալ 	Շինհրապարակ	Արտաքին գնում	Շինարարության ողջ ընթացքում	Կապալառու, քաղաքապետարանի վերահսկողություն
Աշխատանքի անվտանգություն	<ul style="list-style-type: none"> - Անձնակազմի ապահովում արտահագուստով և անձնական պաշտպանիչ միջոցներով - Շինարարության կանոնների և անձնական պաշտպանության նորմերի խստիվ պահպանություն 	Շինհրապարակ	Ստուգման գործընթացներ	Աշխատանքների ողջ ընթացքում	Կապալառու, պատվիրատու

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Մթնոլորտային արտանետումների գույքագրման ձեռնարկ, ЕМЕП/ЕЕА, 2009:
2. СН 245-71. Санитарные нормы проектирования промышленных предприятий.
3. СНиП 1.02.01-85 Инструкция о составе, порядке разработки, согласования и утверждения проектно-сметной документации на строительство предприятий, зданий и сооружений.
4. СНиП 2.04.02-84. Водоснабжение. Наружные сети и сооружения.
5. Сборник методик по расчету выбросов в атмосферу загрязняющих веществ различными производствами, Госкомгидромет, Ленинград, 1986.
6. Инструкция о порядке рассмотрения, согласования и экспертизы воздухоохраных мероприятий и о выдаче разрешений на выброс загрязняющих веществ в атмосферу по проектным решениям, ОНД-84-Н.
7. Укрупненные нормы водопотребления и водоотведения для различных отраслей промышленности, Стройиздат, Москва, 1982г.
8. Временное методическое пособие по расчету выбросов от неорганизованных источников в промышленности строительных материалов, МИНПРОМСТРОЙ СССР, Москва 1984г.
9. Нормы расхода топлив и смазочных материалов на автомобильном транспорте.
10. Нормы расхода жидкого топлива для машин, эксплуатирующихся в предприятиях уборки городских территорий, санитарной очистки и ремонтно-строительном производстве.
11. "Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին" ՀՀ օրենքը, ընդունված 2006 թվականի դեկտեմբերի 20-ին:
12. ՀՀ Կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի "նակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների-ՍԹԿ) նորմատիվները հաստատելու մասին" թիվ 160-Ն որոշում:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՀՀ Գեղարքունիքի մարզ Շողակաթ համայնք
(մարզը, համայնքը)
ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒԹՆՎՈՒԹՅՈՒՆ
(ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԴՐԱՔ)
N 03 «14» 03 2019 թ.

Օբյեկտ Նոր կառուցվող անհատական հանգստի գոտու կառուցում
(օբյեկտի անվանումը, կառուցում, վերակառուցում, ուժեղացում, վերականգնում, գործառնական նշանակության փոփոխություն)
(հակիրճ բնութադրումը, հզորությունը)

III ռիսկայնության աստիճան նախագծային փաստաթղթերի մշակման համար:
ռիսկայնության աստիճանը (կատեգորիան), նախագծման փուլերը և այլն)
Գտնվելու վայրը Գեղարքունիքի մարզի Շողակաթ համայնք, Դրախտիկ գյուղ 1-ին փողոց, թիվ 63,63/1

(մարզի, համայնքի, փողոցի անվանումները, շենքի համարը, հողամասի ծածկագիրը)
Կառուցապատող << Փոքր կղզի >> ՍՊԸ տնօրեն Մարտին Հակակազ Պետրոսյան, անձ. ԱԿ 0409859 տրված՝ 10.12.2009թ. 010-ի կողմից

(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)
Առաջադրանքի տրամադրման հիմքը կառուցապատողի հայտ անշարժ գույքի վարձ, Վկ. N0101066
(կառուցապատման նպատակով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հողամասի տրամադրման, անշարժ գույքի փոփոխման իրավունքը հաստատող անհրաժեշտ փաստաթղթերը)

Առաջադրանքի գործողության ժամկետը 2 տարի
(N 1 հավելվածի 32-րդ կետին համապատասխան)

ՆԱԽԱԳԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ
(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)

1. Հողամասը գտնվում է

<< Գեղարքունիքի մարզի Շողակաթ համայնքի Դրախտիկ գյուղի վարչական տարածքի Մևանա լճի ափամեր ձիտոված նպատակային նշանակությունը՝ հատուկ պահպանվող տարածք

(հողամասի դիրքը քաղաքաշինական միջավայրում, դրա նպատակային և գործառնական նշանակությունը)

2. (*) Հողամասի չափերը

3,50 հա
(հողամասի սահմանները՝ կոորդինատային նշահարմամբ, մակերեսը (հա))

3. Հողամասի առկա վիճակը

Չկառուցապատված միջին թեքություններով, անտառածածկ տարածք:
(ռելիեֆի բնութագիրը, շենքերի (այդ թվում՝ քանդան ենթակա) առկայությունը (օգտագործումը, նշանակությունը, հարկայնությունը, շինարարական նյութերը և այլն), կանաչապատումը, բարեկարգումը և այլն)

4. (*) Տրանսպորտային պայանները

Ցարածքի մուտքը՝ Մևանա-Ծովագյուղ -Վարդենիս-14 ավտոմայրուղուց գոյություն ունեցող երկրորդական ճանապարհ
(ճանապարհների առկայությունը, երկաթուղային տրանսպորտի մուտեցումները և այլն)

5. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ (ջրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման, տաք ջրի մատակարարման, էլեկտրամատակարարման,

բացակայում են

Էլեկտրոնային հաղորդակցության համակարգեր)

(նախագծվող հողամասով կամ կից տարածքով անցնող ինժեներական ենթակառուցվածքները, այդ թվում՝ ստորգետնյա)

6. (*) Կից հողամասեր

<< Մևակ >> ԱՊ – հողատարածքներ

(կից հողօգտագործումների անվանումը և դրանց սահմանները՝ համաձայն ներկայացված սխեմայի)

7. Քնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների տարածքներ (պահպանական գոտիներ)

Չկան

(հուշարձանի անվանումը, կարգավիճակը և այլն)

8. (*) Հատակագծային սահմանափակումներ

<< կառավարության 2008թ. դեկտեմբերի 18-ի թիվ 1563 –Ն որոշման համապատասխան

(տեղանքում գործող արտադրական, պաշտպանվող օբյեկտների, ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների և այլ օբյեկտների նկատմամբ սահմանափակումները, այդ թվում՝ սերվիտուտները)

ՆԱՍԱԳՄԱՑՈՒ ՊԱՇԱՏՆԵՐԸ

(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ ԱՄ:500)

9. Ճարտարապետահատակագծային պահանջներ

Նախագծել քոթեջային անհատական հանգստի գոտի. Տարածքի բարեկարգումը նախագծել պահպանելով գործող նորմերը:

(ելնելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներից, սակայն բաղաբաշխական ծրագրային փաստաթղթերի դրույթներից կամ դրանց բացակայության դեպքում՝ կազմավորված (կազմավորվող) բաղաբաշխական միջավայրի պայմաններից)

9.1. (*) օբյեկտի հեռավորությունը կարմիր գծից (մետր)

Հստ գործող նորմերի

9.2. (*) հեռավորությունը հարևան հողակտրոններից (օբյեկտներից) (մետր)

Հստ գործող նորմերի

9.3. թույլատրելի բարձրությունը (մետր)

15մ

9.4. կառուցապատման խտության գործակիցը (կառույցի (կառույցների) ընդհանուր մակերեսի հարաբերությունը հողամասի մակերեսին)

0,3

9.5. կառուցապատման տոկոսը (կառուցապատվող (անջրանցիկ) տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին տոկոսներով (%))

25%

9.6. կանաչապատման տոկոսը (կանաչապատ տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով (%))

75%

9.7. այլ պահանջներ

բացակայում են

10. Հողամասում գտնվող շենքերի ու շինությունների քանդման կամ սեղավիտման (ապամոնտաժման) պայմանները և աշխատանքների հերթականությունը

11. Ստորգետնյա, կիսանկուղի և առաջին հարկերի տարածքների օգտագործման պայմանները

_____ համաձայն նախագծի _____

12. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ

Պահանջներ՝ գոյություն ունեցող և նախագծվող ենթակառուցվածքների ու ցանցերի նկատմամբ

12.1. (*) ջրամատակարարում, կոյուղի, տաք ջրի մատակարարում

Կցվում է ջրամատակարարումը՝ անհատական թերովի կոյուղին՝ նախատեսել մաքրման կայան հանգստացողների քանակի հաշվարկով /01.12.2005թ N 2128 –Ն որոշում/

(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.2. (*) էլեկտրամատակարարում

Կցվում է ՀԷԹ-ի կողմից տրված տեխ. պայմանի (համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.3. (*) գազամատակարարում

Կցվում է _____ չի նախատեսվում _____ (համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.4. (*) էլեկտրոնային հաղորդակցության մատչելիություն կոյուղու (ներառյալ դիտահորը) տեղադիրքը

Կցվում է բացակայում է _____ (համաձայն N 1 հավելվածի 58-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված ելակետային տվյալների)

12.5. թույլ հոսանքներ

_____ չի նախատեսվում _____

12.6. աղբահանություն

_____ ըստ համայնքի հետ կնքված պայմանագրի _____

13. Տարածքի ինժեներական նախապատրաստում

_____ Հնարավորինս պահպանել բնական լանդշաֆտը: (ռելիեֆի կազմակերպման, ջրահեռացման, ինժեներական պաշտպանության միջոցառումները)

14. Բարեկարգում

_____ ՀՀ կառավարության 2008թ դեկտեմբերի 18-ի թիվ 1563 –Ն որոշման համապատասխան (լանդշաֆտային պլանավորման վերաբերյալ պահանջները, կանաչապատում, ճարտարապետական փոքր ձևեր, ցանկապատում, գովազդ և այլն)

15. Շինարարական նյութեր

_____ ըստ նախագծի _____ (շինարարական նյութերի օգտագործման վերաբերյալ առաջարկությունները)

16. Պաշտպանական կառույցներ

Գի նախատեսվում _____ (արտակարգ իրավիճակներում մարդկանց և օբյեկտների պաշտպանության միջոցառումները)

17. Հակահրդեհային պահանջներ

_____ Ըստ գործող օրենքի _____ (հակահրդեհային անվտանգության ապահովման միջոցառումները)

18. Հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության միջոցառումներ

_____ ՀՀ քաղաքաշինության նախարարի 10.10.2006թ. N 253 –Ն հրամանով _____

19. Շրջակա միջավայրի պահպանում

_____ Ըստ գործող օրենքի _____ (շրջակա միջավայրը վտանգավոր ազդեցությունից բացառելու միջոցառումները)

20. Շինարարության կազմակերպում

_____ Նախատեսել չին աշխատանքների կազմակերպման նախագիծ և օրացուցային գրաֆիկ _____ (առաջարկություններ շինարարության հետ կապված)

անբարենպաստ ազդեցության բացառման, քաղաքային տնտեսության և տրանսպորտի անխափան աշխատանքի ապահովման վերաբերյալ

21. Առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը

երկու տարի , փուլը աշխատանքային
(նշվում են առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը)

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

22. Նախագծային փաստաթղթերի փորձաքննությանը ներկայացվող պահանջներ

Ենթարկել համալիր և բնապահպանական փորձաքննության
(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված փորձաքննության տեսակը կամ նախագծողի երաշխավորագիր՝ հղում կատարելով համապատասխան իրավական ակտին)

23. Միջանկյալ համաձայնեցում

Շողակաթի համայնքապետարան
(իրավասու մարմնի կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում շահագրգիռ մարմինների հետ էսքիզային նախագծի նախնական համաձայնեցում, նշվում է նաև առաջադրանքի փոփոխման հնարավորությունը՝ N 1 հավելվածի 89-րդ կետով նախատեսված դեպքում)

24. Հասարակական քննարկումներ

«Հասարակության 1998 թվականի հոկտեմբերի 28-ի N 660 որոշմամբ սահմանված կարգով
(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով)

25. Համաձայնեցումների կամ մասնագիտական եզրակացությունների ստացում

(նշվում են տվյալ օբյեկտի համաձայնեցման՝ օրենքով սահմանված պահանջները հուշարձանների ու բնության պահպանության և այլ լիազորված մարմինների հետ, ինչպես նաև N 1 հավելվածի 56-րդ կետով սահմանված դեպքերում՝ ինժեներական ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտագործողի) հետ)

26. Փոստային բաժանորդային պահարանների տեղադրում

Ըստ գործող օրենքի

27. Այլ պայմաններ

չկան



Ս.ՇՈՒՇԱՆՅԱՆ
(տնօրագրությունը, անունը, ազգանունը)

վարչաբաղադրյալ
պլան

Հաստատված է
ՀՀ կառավարության 2004թ.-ի
մայիսի 13-ի թիվ 766-Ն որոշմամբ
ՁԼ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 278

պարկի 1908.0 (Հազար ինն հարյուր ութ) մետր բացարձակ նիշից բարձր
տարածքներում հողամասի վարձակալության մասին

երկու հազար չորս թվականի նոյեմբերի քսաներեքին « 19 » Նոյեմբերի 2004 թ.

«Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տնօրեն Գագիկ Մարտիրոսյանը /այսուհետև վարձատու/ ,մի կողմից, և

/անունը, ազգանունը/

«Փոքր Կողի» ՍՊԸ-ի տնօրեն Արա Սմբատյանը՝ բնակվող

Ք. Սևան, Խաղաղության փող., շ 4, բն 30, անձ. AA 0316632, տրվ. 07.02.96թ., 001

/վարձակալի անունը, ազգանունը, անվանումը/

/այսուհետև վարձակալ/, մյուս կողմից 2004 թ. մայիսի 13 -ի N 766-Ն որոշման և մրցույթի արդյունքների մասին թիվ
229 արձանագրության հիման վրա կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

I Պայմանագրի առարկան

1. Սույն պայմանագրին համապատասխան վարձատուն մրցույթում հաղթող անձին՝ վարձակալին
համապատասխան վարձավճարի դիմաց նրա տիրապետմանը և օգտագործմանն է տրամադրում ըրախտիկ գյուղի
ափամերձ հատված վայրում գտնվող 50000 (Հիսուն հազար) քառ.մ.մակերես ունեցող հողամասը՝ համաձայն
սույն պայմանագրի N 1 հավելվածի , որը հանդիսանում է հողամասի հատակագիծը և սույն պայմանագրի
անբաժանելի մասը:

2. Հողամասը տրամադրվում է Հանգստի գոտի կազմակերպելու նպատակով

/ հողամասի տրամադրման նպատակը /

պայմանները / ներդրումները, դրանց ժամկետները, կառուցման ժամկետները/

Հողամասի օգտագործման նկատմամբ սահմանափակումներն են՝

ա. 1908.0 մետր բացարձակ նիշից ցածր արգելվում է կատարել կապիտալ շինարարություն

բ. այլ սահմանափակումներն ամրագրված են սույն պայմանագրի 5.3, 5.4, 5.5, 5.6, 5.7 և 6-րդ կետերով:

3. Հողամասի նկարագիրը Անտառածածկ տարածք

II Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

4. Վարձակալն իրավունք ունի

4.1 Տիրապետելու և օգտագործելու վարձակալած հողամասը սույն պայմանագրին ու հողի նպատակային
նշանակությանը համապատասխան

4.2 Վարձակալած հողամասը ենթարկելու բարելավումների և փոփոխությունների՝ դրա նպատակային
օգտագործմանը համապատասխան՝ ապահովելով բնապահպանական, քաղաքաշինական, հակահրդեհային,
սանիտարական և այլ նորմատիվ պահանջները:

4.3 Վարձակալված հողամասը ենթարկելու բարելավումների և փոփոխությունների (այդ թվում Հայաստանի
Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնելու կապիտալ շինարարություն) դրա
նպատակային օգտագործմանը համապատասխան:

4.4 Միայն վարձատուի համաձայնությամբ և նրա կողմից սահմանված պայմաններով ու ժամկետներով
վարձակալված հողամասը ենթավարձակալության հանձնելու երրորդ անձի

4.5 Հողամասի վարձակալության ժամկետի ավարտմանը կամ պայմանագրի վաղաժամկետ դադարեցմանը
նախորդող երեք ամսվա ընթացքում միջոցներ ձեռնարկելու սույն պայմանագրի պայմաններին համապատասխան
վարձակալված գույքը վարձատուին ժամանակին վերադարձնելու համար վարձատուի գրավոր համաձայնությամբ
հանելու իր կողմից հողի վրա կատարված բաժանելի բարելավումները, իսկ ամրակալված անշարժ գույքը կողմերի
միջև որոշվող պայմաններով օժանդակելու վարձատուին

4.6 Վարձատուի կողմից պայմանագիրը միակողմանի վաղաժամկետ լուծվելու դեպքում պահանջելու
հատուցում քաղաքացիական վնասների դիմաց

4.7 Վարձատուի համաձայնությամբ , Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված
դեպքերում կարգով՝ նախնապատվության իրավունքով շարունակելու սույն պայմանագիրը՝ դրա ժամկետի
ավարտից հետո:

5. Վարձակալը պարտավոր է .

5.1 ժամանակին և սույն պայմանագրով սահմանված կարգով մուծել վարձավճարը

5.2 ժամանակին և սահմանված կարգով ապահովել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ,
ինչպես նաև հողահատկացման մասին որոշմամբ ու սույն պայմանագրով նախատեսված հողամասի օգտագործմանը
ներկայացվող պահանջներն ու պահպանման միջոցառումները



5.3 բացառել բույսերի և կենդանիների նոր տեսակների ներմուծումը և կլիմայավարժեցումը, վնասատուների դեմ պայքարի ու հողերի պարարտացման նպատակով թունաքիմիկատների և պարարտանյութերի օգտագործումը

5.4 ապահովել մեքենաների և այլ տրանսպորտային միջոցների կանգառը նախագծային փաստաթղթերով, դրանց համար նախատեսված վայերերում

5.5 բացառել լողափերի շահագործումը՝ առանց փրկարարական և բուժսպասարկման ծառայությունների

5.6 թույլ չտալ վարձակալված հողամասի այնպիսի փոփոխություն, որը կհանգեցնի հողի արժեքի նվազեցմանը, կամ բնութագրերի վատթարացմանը

5.7 Վարձատուի համաձայնությամբ փոփոխությունների ենթարկել վարձակալած հողամասը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանն ու սույն պայմանագրին համապատասխան

5.8 պահպանել սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող հավելվածով սահմանված պահանջները

6. Վարձակալին արգելվում է ինքնակամ կերպով վարձակալության իր իրավունքը լրիվ կամ մասնակիորեն երրորդ անձին փոխանցել կամ զիջել, հողը կամ դրա նկատմամբ գույքային իրավունքները գրավ դնել կամ իրավաբանական անձի կանոնադրական կապիտալը ներդնել կամ հողամասն օգտագործման իրավունքը (հատուցմամբ կամ անհատույց) երրորդ անձի տրամադրել:

6.1 սույն պայմանագիրը կնքման և նոտարական վավերացման օրվանից երեսուկուսուց մեկ ամիսը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանում՝ իրավունքների պետական գրանցման համար, և ֆինանսական միջոցների հաշվին կատարել սույն պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված բոլոր ծախսերը, այդ թվում՝ վճար պետական տուրքը :

7. Վարձատուն իրավունք ունի

7.1 վարձակալալից պահանջելու հողն օգտագործել սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու պայմաններին համապատասխան, պահպանելու հողի օգտագործման նկատմամբ սահմանափակումները իրականացնելու հողի բարելավման միջոցառումներ

7.2 Վարձակալի կամ նրա ներկայացուցչի հետ միասին մուտք գործելու վարձակալված հողամասն օգտագործման պայմանները հսկելու նպատակով, չխոչնդոտելով վարձակալի բնականոն գործունեությունը

7.3 Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն պայմանագրով սահմանված դեպքում և կարգ վաղաժամկետ լուծելու պայմանագիրը

7.4 օգտվելու Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ իրավունքներից

7.5 հողամասի վարձակալության ժամկետն ավարտվելուց կամ պայմանագիրը վաղաժամկետ լուծվելու հետո իր հայեցողությամբ տնօրինելու իր պահանջով վարձակալի կողմից թողնված հողի բարելավումները ամրակալված գույքը (բաժանելի և անբաժանելի):

8. Վարձատուն պարտավոր է

8.1 չմիջամտել վարձակալի տնտեսական գործունեությանը, եթե այն վնաս չի պատճառում շրջամիջավայրին և չի խախտում այլ անձանց իրավունքները և օրինական շահերը

9. Սույն պայմանագրի գործողության ժամկետում վարձակալի կողմից իրականացված գույքի բաժանելի անբաժանելի բարելավումների կորստի ռիսկը կրում է վարձակալը՝ Սևանա լճի մակարդակի բարձրացման և սույն պայմանագրի յոթերորդ բաժնով սահմանված դեպքերում:

III Վարձավճարը

10. Հողամասի տարեկան վարձավճարը կազմում է տվյալ հողամասի կադաստրային արժեքի 5.5 տոկոսը որը կազմում է 400000 (չորս հարյուր հազար) դրամ: Պայմանագրի կնքման պահին հողամասի կադաստրային արժեքը 1 քմ.-ի համար կազմում է 144 (մեկ հարյուր քառասունչորս) դրամ:

11. Հողի կադաստրային արժեքի փոփոխման դեպքում վարձատուն պարտավոր է նոր կադաստրային արժեքի նախօրոք գրավոր տեղյակ պահել վարձակալին: Հողի կադաստրային արժեքի աճի դեպքում կադաստրային արժեքի հիման վրա հաշվարկված վարձավճարի չափը ենթակա է կիրառման ոչ շուտ , քան դրա մա գրավոր տեղեկացվելուց : տասնհինգ օր անց: Վարձավճարը չի փոփոխվում , եթե վարձակալը մի փոփոխության համար չի ներկայացրել փոփոխվող տարածքի վերաբերյալ փոփոխվող 21.2 -րդ կետով նախատեսված կարողացված վարձատուի ծանուցել է պայմանագրի վաղաժամկետ լուծման մասին:

12. Թվացույթային սույն պայմանագրի 11-րդ կետով նախատեսված դեպքերի, վարձավճարի չափը կարող է փոփոխվել միայն սույն պայմանագրի կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ, այդ թվում՝ Սևանա լճի մակարդակի փոփոխման արդյունքում վարձակալված հողամասի չափերի փոփոխման դեպքում:

13. Վարձավճարի փոփոխման վերաբերյալ փոխադարձ համաձայնության բացակայության դեպքում կողմերը պարտավոր են լուծել սույն պայմանագրի 19 -րդ, կամ 20.2-րդ կետերով նախատեսված կարգով:

13. Վարձակալական ընթացիկ վճարումները վարձակալի կողմից մուծվում են հավասար չափերով և հետ տարվա օրացուցային եռամսյակների՝ ոչ ուշ, քան մինչև համապատասխան եռամսյակի վերջին ամսվա քսանհինգ օրը: Առաջին վարձակալական վճարումները կատարվում են որպես կանխավճար՝ ոչ ուշ, քան պայմանագրի ուժի մտնելու օրվանից տաս օրվա ընթացքում: Վերջին վարձակալական վճարումը կատարվում է ոչ ուշ, քան մի օրվա ընթացքում:

- 14. Սույն պայմանագրով վարձակալական վճարումները կատարվում են Հայաստանի Հանրապետության Հինգվետեռանկի Սևանի մասնաճյուղի 247720197125 հաշվի համարին: Վարձատուն նշված հաշվի համարի վճարումների կատարման կարգի փոփոխման մասին նախապես տեղյակ է պահում վարձակալին:
- 15. Ոչ լրիվ վճարային ժամանակաշրջանների համար վարձավճարը հաշվարկվում է՝ ելնելով տվյալ ցուցային եռամսյակի օրերի փաստացի թվին համապատասխանող օրական վարձավճարի վերահաշվարկից:

IV Տույժերը և տուգանքները

16. Վարձակալը վարձավճարների ամբողջությամբ կամ մասնակի ուշացման յուրաքանչյուր օրվա համար լում է տուգանք՝ վարձատուին չվճարված գումարի զրո ամբողջ զրո հինգ տոկոսի չափով:

V Պայմանագրի ժամկետները

- 17. Սույն պայմանագիրը կնքվում է 25 (քսանհինգ) տարի ժամկետով և ուժի մեջ է մտնում մանված կարգով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի րական կոմիտեի տարածքային ստորաբաժանումում իրավունքների պետական գրանցման պահից:
- 18. Պայմանագրի ժամկետը կարող է երկարաձգվել կողմերի համաձայնությամբ՝ Հայաստանի րապետության օրենսդրությամբ սահմանված դեպքում և կարգով:
- 19. Սույն պայմանագրով սահմանված ժամկետի ավարտից հետո՝ վարձակալված հողամասի տիրապետումն օգտագործումը վարձակալի կողմից չդադարեցվելը հիմք չի հանդիսանում պայմանագրի նորոգման կամ ձակալության ժամկետի երկարաձգման համար: Վարձակալի պարտականությունները պահպանվում են նրա յից վարձակալված հողամասի ժամկետանց տիրապետման և օգտագործման ամբողջ ընթացքում:

VI Պայմանագրի դադարեցումը

- 20. *Սույն պայմանագիրը լուծվում է՝*
 - 20.1 Պայմանագրի ժամկետը լրանալու դեպքում
 - 20.2 Կողմերի փոխադարձ համաձայնությամբ, այդ թվում՝ Սևանա լճի մակարդակի բարձրացման արդյունքում մասն իր նպատակային նշանակությամբ օգտագործելն անհնարին լինելու դեպքում,
 - 20.3 Պայմանագրով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքում և կարգով մանագիրը վաղաժամկետ լուծվելու դեպքում:
- 21. *Սույն պայմանագիրը վարձակալի կողմից կարող է միակողմանի վաղաժամկետ լուծվել՝*
 - 21.1 Եթե հողը վարձակալից անկախ պատճառով դարձել է օգտագործման համար ոչ պիտանի
 - 21.2 Ցանկացած այլ հիմքերով՝ դրա մասին մեկ ամիս առաջ գրավոր ծանուցելով վարձատուին:
- 22. *Սույն պայմանագիրը վարձատուի կողմից կարող է միակողմանի վաղաժամկետ լուծվել՝*
 - 22.1 Եթե վարձակալը երեք ամիս ուշացնում է վարձավճարի մուծումը
 - 22.2 Եթե վարձակալի հողամասն օգտագործվում է ոչ նպատակային և խախտվում են օգտագործման մանները
 - 22.3 Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված հիմքերով կամ սույն պայմանագրի ստումների դեպքում:

VII Անհաղթահարելի ուժը

- 23. Սույն պայմանագրով անհաղթահարելի ուժ ասելով հասկացվում է ջրհեղեղ , պայթյուն, հրդեհ, րաշարժ, այլ տարերային արևետներ, պատերազմ, ռազմական գործողություններ, զինված հարձակում, ձվածալին և քակրություններ, մայրուղային խողովակաշարի վթար կամ նման այլ իրադարձություններ :
- 24. Կողմերը իրենց պարտականությունները մասնակիորեն կամ լրիվ չկատարելու համար ազատվում են սույն յմանագրով սահմանված պատասխանությունից, եթե դա կատարվել է սույն պայմանագիրը կնքելուց հետո չած այնպիսի անհաղթահարելի ուժի հետևանքով , որը կողմերը չէին կարող կանխել կմ կանխագուշակել , և որի չած այնպիսի անհաղթահարելի ուժի հետևանքով , որը կողմերը չէին բնականոն օգտագործումը:
- 25. Անհաղթահարելի ուժի ազդեցության ժամանակահատվածը մեկ ամսվանից ավել երկարաձգվելու կամ հետևանքները վեց ամսվա ընթացքում չվերացվելու դեպքում կողմերը պետք է ընդունեն սույն պայմանագրի ունակման մասին որոշում:



VIII Եզրափակիչ դրույթներ

- 26. Սույն պայմանագիրը կնքվում է **6 (վեց)** հավասարազոր օրինակից, որոնցից մեկական օրինակ պահվում են կողմերի մոտ, մեկը անշարժ գույքի գրանցման լիազորված պետական մարմնում և մեկ օրինակ մնում է նոտարին:
- 27. Սույն պայմանագիրը պարտադիր է կողմերի իրավահաջորդների համար:
- 28. Կողմերի միջև ծագած տարաձայնությունները լուծվում են փոխադարձ համաձայնությամբ կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
- 29. Պայմանագրի ժամկետը լրանալուց հետո այն ենթակա է վերակնքման՝ մինչև լճի մակարդակը վարձակալված տարածքի բացարձակ միշին հասնելը:

Կողմերի վավերատերերը

«Սևան ազգային պարկ» Պետական
(կազմակերպության անվանումը)

Ոչ Առևտրային կազմակերպության տնօրեն

Պաշտոնատեղի

Ք. Սևան, Լաիրյան 178
հեռ. (061) 2-40-44 fax: (061) 2-40-86
E-mail: SevanAP@mbd.am

Լիազորված անձ վարձատրի ներկայացուցիչ
«Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի շախտակից

[Signature]
(ստորագրություն)

Նիկոլայ Սիմոնյան
(անուն, ազգանուն)

Վարձակալության պայմանագրի 50000 հոդված

«Փոքր կղզի» ՍՊԸ-ի տնօրեն
(կազմակերպության անվանումը)

վ. 03Ա 065522 տրվ. 18.11.2004 թ.

Արա Սմբատյան
(տնօրենի ան. ազգ. հայր.)

[Signature]

(ստորագրություն)

Ք. Սևան, Խաղաղության փող., 24, բն 30
հեռ. (061) 2-33-44



Երկու հազար չորս թվականի նոյեմբերի քսաներեքի սույն պայմանագիրը վավերացված է իմ՝ Սևանի նոտարական տարածքի նոտար Համբարձումյանի կողմից:

Կողմերը պայմանագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ: Պայմանագիրն ստորագրած անձանց ինքնությունը, նրանց գործունակությունը, ինչպես նաև /իրավաբանական անձի/ իրավունակությունը, նրա ներկայացուցչի լիազորությունները և անշարժ գույքի նկատմամբ, Սևան ազգային պարկ, ՊՈԱԿ-ի իրավունքները ստուգված են:

ՀՀ Քաղ.օր.-ի 611 հոդվածին համապատասխան սույն պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման անշարժ գույքի պետական կադաստրի համապատասխան տարածքային սխորաբաժանումում:

Իմ կողմից վավերացված սույն պայմանագիրը ունի օրենքով նախատեսված հանրային հեղինակություն և լիարժեք ապացուցողական ուժ:

Գրանցված է գրանցամատյանում նո 1200

Գանձված է պետական տուրք և ծառայության վճար համաձայն «Պետական տուրքի մասին», և «Նոտարիալի մասին» ՀՀ օրենքների:

Սեվանի ՆՈՏԱՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՆՈՏԱՐ *[Signature]* Հ.Պ. ՀԱՐՈՒԹՅՈՒՅԱՆ



1008330



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԿԱՅԱԿԱՆ
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏԱՍԱՐ ԻՐԱԿՈՒՆՔՆԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Սույն վկայականով հաստատվում է «1» Դեկտեմբերի 2014 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱԿՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ (ՆԵՐ)

«ՓՈՔԻ ԿԴՉԻ» ՍՊԸ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆԿԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Գեղարքունիք, համայնք Դրախտիկ 1 փողոց 63/1 հողամաս

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ


Վարձակալության պայմանագիր 23.11.2004թ. N 278 գրանցված սեղ. թիվ 1200

4. ՀՈՂԱՍՏԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 05-032-0791-0115

Մակերեսի չափը (հա)՝ 1.1

Նպատակային նշանակությունը՝ հատուկ պահպանվող տարածքների
Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Հանգստի համար նախատեսված
Գրանցված իրավունքի տեսակը՝ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ



7008330



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԿԱՅԱԿԱՆ
 ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏԱՍԱՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
 ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Սույն վկայականով հաստատվում է «1» Դեկտեմբերի 2014 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ (ՆԵՐ)

«ՓՈՔԻ ԿՂԻ» ՍՊԸ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Գեղարքունիք, համայնք Դրախտիկ 1 փողոց 63 հողամաս

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑՎԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Վարձակալության պայմանագիր 23.11.2004թ. N 278 գրանցված սեղ. թիվ 1200

4. ՀՈՂԱՍՏԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 05-032-0791-0116

Մակերեսի չափը (հա)՝ 2.4

Նպատակային նշանակությունը՝ հատուկ պահպանվող տարածքների
 Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Հանգստի համար նախատեսված
 Գրանցված իրավունքի տեսակը՝ ՎԱՐՁԱՎԱԼՈՒԹՅՈՒՆ

